# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 14 (1714) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 18, 2015
VOLUME 35, NO. 14 (1714) SATURDAY, APRIL 18, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Եւրոպական Խորհրդարանը Կոչ Ըրաւ Թուրքիոյ՝ Ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը

*Ապրիլ 15, Եւրոպական Միութեան Խորհրդարանի լիագումար նիստի ընթացքին ձայներու մեծամասնութեամբ վաւերացուեցաւ Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւ մը:*

*«Եւրոպական Միութեան խորհրդարանը կոչ կ'ընէ Թուրքիոյ՝ ճանչնալ հայերու ցեղասպանութիւնը», ինչպէս ըսուած է բանաձեւի նախագծին մէջ:*

*«Հայոց Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցի շեմին Եւրոպական Խորհրդարանը յարգանքի տուրք կը մատուցէ Օսմանեան Կայսրութեան մէջ զոհուած 1.5 միլիոն անմեղ հայերու յիշատակին, եւրոպական արդարադատութեան եւ համերաշխութեան ոգիին*

*Շար.ը էջ 7*

## Հռոմի Ֆրանչիսկոս Պապի Պատմական Ելոյթէն Ետք Թուրքիոյ Զայրոյթը Սահման Չունի

*Կիրակի, Ապրիլ 12-ին Վատիկան Սուրբ Պետրոս տաճարէն ներս մատուցուած պատարագի ընթացքին, որ նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին, Հռոմի Կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետ Ֆրանչիսկոս 1915 թուականի իրադարձութիւնները անուանեց «20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն»: Ան կոչ ուղեց միջազգային հանրութեան զայն ճանչնալ որպէս այդպիսին: Պապը խօսեցաւ վէրքերու բուժման կարեւորութեան մասին եւ յայտնեց, որ բուժման արժանի վէրքը կը թարախակալուի եթէ վերջնական բուժումի չարժանանայ:*

*Այս յայտարարութիւնը խիստ զայրացուցած է Թրքական իշխանութիւններուն, ու անոնք ամենէն բարձր մակարդակով կը բողոքեն Պապի յայտարարութիւններուն դէմ:*

*Թուրքիոյ Նախագահ Ռէճէփ Էրտողան այնքան առաջ գնաց, որ հանդիմանական ոճով մը զգուշացուց Պապին՝ անգամ մըն ալ նման արտայայտութիւն չունենալ:*

*Թուրքիոյ նախագահը դատապարտեց Ֆրանչիսկոս Պապին յայտարարութիւնները եւ զինք զգուշացուց նման «անհիմն պնդում-*



*Սուրբ Պետրոս տաճարէն ներս կ'ողջագուրուին Ֆրանչիսկոս Պապը եւ Գարեգին Բ. Կաթողիկոսը*

*Շար.ը էջ 17*

## 3000 Հոգի Ներկայ Եղան 100-Ամեակի Լոս Անճելըսի Միջ-Համայնքային Ոգեկոչումին



*Տեսարան մը Լոս Անճելըսի միջ-համայնքային ոգեկոչումէն*

*Երեքշաբթի, Ապրիլի 14ին, Լոս Անճելոսի «Հրեշտակներու Թագուհի» Կաթողիկէ տաճարին մէջ, 3000 հոգիի ներկայութեան տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան Միջ-Համայնքային ոգեկոչման հանդիսութիւնն ու հոգեհանգիստը: Սոյն միջոցառումին ներկայ էին 16 եպիսկոպոսներ եւ տասնեակ մը քաղաքական, դիւանագիտական, կրօնական եւ այլ անձնաւորութիւններ:*

*Այս առթիւ ելոյթ ունեցաւ նաեւ Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիք Կարսեթի: Ան իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատին, բուռն կերպով դատապարտելով 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Կարսեթին միաժամանակ դրուատեց հայ ժողովուրդի խաղաղասէր ու շինարար ոգին, իր գոհունակութիւնը*

*Շար.ը էջ 5*

## Դոկտ. Աբէլ Քինյ. Մանուկեանի «Հայրենիքի Ազատագրութեան Բանակին Համոզուած զինուորները» գիրքի շնորհանդէսը




*Շնորհանդէսի ընթացքին ելոյթ կ'ունենայ գրքի հեղինակ՝ Դոկտ. Աբէլ Քինյ. Մանուկեան*

*Յուշահանդէս մըն էր կարծէք նուիրուած հայ ժողովուրդի ազատագրական պայքարի քաջարի մարտիկներուն: Արդարեւ, Ապրիլի 12ին, 2015, շուրջ 200 հոգի ներկայ եղան Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի Կարօ Սողանալեան սրահ: Ներկաներուն մէջ կը գտնուէին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան, Արեւմտեան Ամերիկայի Շրջանի Վարիչ Մարմնի, անդամներ, միութիւններու ինչպէս նաեւ հայ մամուլի եւ հեռատեսիլի ներկայացուցիչներ:*

*Շար.ը էջ 5*




## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Խելայեղ գիշեր. Քիմն ու Ուեսթը Հայաստանին սովորեցրին չվախենալ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Նախօրէին Երեւանում խելայեղ գիշեր է եղել: Հայաստանից մեկնելուց առաջ Քիմ Քարտաշեանի ամուսինը՝ համաշխարհային հռչակ վայելող Ռեփեր Քանիէն Ուեսթը, ով Քարտաշեանի հայաստանեան այցի օրերին համեստօրէն ուղեկցում էր նրան՝ չնեղուելով ստուերից եւ Քիմի հանդէպ ուշադրութեան համեմատ իր հանդէպ ցուցաբերուած փաստացի անուշադրութիւնից, փոքր համերգ է տուել հայաստանցիների համար՝ Կարապի լճում: Իսկ համերգի վերջում Քանիէն ցատկել է լիճը, ինչից յետոյ ջուրն են ցատկել հաւաքուած երիտասարդ հանդիսականների մի մասը, նաեւ ոստիկանները՝ որոնք պէտք է ապահովէին Ուեսթի անվտանգութիւնը:

Ուեսթի հետ ջուրը մտած հայաստանեան երիտասարդութիւնը Հայաստանի ապագան է՝ համաշխարհային կեանքի մի մասը հանդիսացող, այդ կեանքում իր տեղն ու դերը փնտռող, իր ասելիքը որոնող Հայաստանի ապագան: Դա իհարկէ ոչ մի կերպ չի կարող նշանակել, որ նրանք, ովքեր Ուեսթի յետեւից ջուրը չեն մտել կամ ընդհանրապէս ներկայ չեն եղել նրա համերգին, Հայաստանի ապագան չեն կամ չեն կարող լինել: Իհարկէ այդպէս չէ: Ի վերջոյ ապագան բազմազան է, եւ այդ իմաստով հենց դա է նաեւ ապագայի, ժամանակի ուժը՝ բազմազանութիւնը:

Քարտաշեանների եւ Ուեսթի այցը Հայաստան բերեց հենց բազմազանութիւն:

Այն դարձաւ բազմաթիւ քննարկումների, սուր բանավէճի, իրարամերժ ու ծայրայեղ գնահատականների առարկայ: Շատ-շատերը փորձեցին այցը հակադրել Հայաստանի առաջ կանգնած խնդիրներին, մեղադրել շատերին, որ «շեղւում» են այդ խնդիրներից ինչ որ մի «շօուի» պատճառով: Կարծես եթէ այդ «շօուն» չլինէր, չէին լինելու եղած խնդիրները, կամ հասարակութիւնն անմնացորդ ու հոծ բազմութեամբ լծուելու էր այդ խնդիրները լուծելու գործին:

Պարզապէս Քարտաշեանների այցը դարձաւ հերթական մի բանը, որի յետեւում թաքնւում էր թէ պետութիւնն ուտող իշխող համակարգը, թէ նաեւ այդ համակարգի դէմ արդիւնաւէտ պայքարի ուղի չգտնող ընդդիմադիր ուժերնու հասարակութիւնը՝ նրանց էլ միշտ պէտք է մէկը, ով խանգարում է, ով «շեղում» է ժողովրդին: Նրանց էլ միշտ պէտք է մի բան կամ մէկը, որը հնարաւորութիւն կը տայ ասելու, թէ մեղաւոր է ժողովուրդը, որը չի հասկանում, թէ ինչն է կարեւոր կամ անկարեւոր: Այս անգամ այդ մէկը Քարտաշեաններն էին:

Նրանց համար էլ մեղաւոր են բոլորը, բայց ոչ երբեք իրենք: Նրանց մօտ երբեք խորութեամբ չի առաջանում հարցը, թէ իսկ ինչո՞ւ, ինչի՞ պատճառով կամ հետեւանքով է, որ Հայաստանում բոլորը կարողանում են «շեղել» ժողովրդին, ու դա չի ստացւում միայն ընդդիմադիր ուժերի կամ խմբերի մօտ:

Իսկ գուցէ խնդիրը պէտք է փնտռել հենց այդ ուժերի կամ խմբերի ներսում: Այդ ուժերից բոլորի անկեղծութեան եւ պայքարի հաստատակամութեան հարցում անխտիր համոզուածութեամբ հանդերձ, այդուամենայնիւ պէտք է որ արդէն պարզ լինի՝ միայն անկեղծութիւնն ու հաստատակամութիւնը, հետեւողականութիւնը շատ քիչ են իշխող համակարգի դէմ արդիւնաւէտ պայքարի համար: Հետեւաբար պէտք է կենտրոնանալ դրա վրայ՝ ինչն է պակասում արդիւնաւէտութեան համար, ոչ թէ շուրջ բոլորը փնտռել «մեղաւորներ»: Դա ի միջի այլոց:

Ինչ վերաբերում է ապագային, ապա Քարտաշեանների այցի մի քանի օրը Հայաստանում ի յայտ բերեց կարեւոր մի բան՝ Հայաստանում որքան վախ կայ աշխարհի հանդէպ, այդուհանդերձ կայ նաեւ աշխարհի պահանջարկ: Քարտաշեաններն ու Ուեսթը այս դէպքում աշխարհի հետ հաղորդակցութեան կապուղիներից մէկն էին, եւ այդ իմաստով խորհրդանշական էր Հայաստանին հրաժեշտից առաջ Կարապի լիճը մտնելու Ուեսթի քայլը: Ինչպէս ասում են՝ ջուրը մտնողը թրջուելուց չպէտք է վախենայ: Քիմն ու Ուեսթը Հայաստանին իրենց չափով օգնեցին չվախենալ ջուրը մտնելուց եւ թրջուելուց՝ բառի բուն եւ փոխաբերական իմաստով:

Միեւնոյն ժամանակ, հասկանալի է, որ այդօրինակ կապուղիներն ինքնին չեն կարող լինել նպատակ: Դրանք պէտք է լինեն միջոց: Եւ այդտեղ արդէն Քարտաշեանների «առաքելութիւնն» աւարտւում է, որովհետեւ միջոցն արդէն կախուած է Հայաստանից, այն որակներից ու բովանդակութիւնից, որ Հայաստանն ունի, որ Հայաստանի «էլիտաներն» ունեն:

Քարտաշեաններով աշխարհը տեղեկանում է Հայաստանի մասին՝ եւ այդ խնդիրը նրանք լուծում են եթէ ոչ գերազանց, ապա բաւական բարձր մակարդակով: Բայց Հայաստանի մասին տեղեկանալուց յետոյ աշխարհը պէտք է ճանաչի Հայաստանը: Իսկ այդտեղ արդէն առաքելութիւնը բացառապէս Հայաստանինն է, որովհետեւ ճանաչման բաղադրութիւնը բացառապէս լինելու է այն, ինչ Հայաստանն է ներկայացնում իրենից, ոչ թէ արտերկրի որեւէ հանրահռչակ հայրենակից:

«ԼՐԱԳԻՐ»

**Քարտաշեաններով աշխարհը տեղեկանում է Հայաստանի մասին՝ եւ այդ խնդիրը նրանք լուծում են եթէ ոչ գերազանց, ապա բաւական բարձր մակարդակով**

**Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը**

# Աւերակների թագաւորը

*ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ*

Ուղիղ մէկ տարի առաջ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ նշանակուեց Յովիկ Աբրահամեանը: Մէկ տարի անց Հայաստանի Հանրապետութիւնում լիովին այլ իրավիճակ է, քան այն ժամանակ, սակայն այդ իրավիճակի փոփոխութեան, ընդ որում՝ 180 աստիճանի փոփոխութեան հարցում Յովիկ Աբրահամեանը մեծ հաշուով որեւէ դերակատարում չունի, եւ այդ փոփոխութիւնն էլ, ըստ էութեան, այն փոփոխութիւնը չէ, որ Հայաստանում ակնկալւում է որեւէ վարչապետից:

Վարչապետից Հայաստանում ակնկալւում է սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխութիւն, փոփոխութիւն տնտեսութեան ցուցանիշներում, փոփոխութիւն մարդկանց կեանքում, գործարար միջավայրի ակտիւացում, ներդրումային գրաւչութեան աճ, ներդրումներ, փոքր ու միջին բիզնեսի զարգացում: Այս ամէնի համար անհրաժեշտ քայլերն էլ, իհարկէ, պարզ են վաղուց, քանի որ սրանց մասին շատ է խօսուել: Սակայն Յովիկ Աբրահամեանի վարչապետութիւնից մէկ տարի անց այս ամէնում ոչ միայն փոփոխութիւններ չկան, այլեւ իրավիճակը, ըստ էութեան, լիովին յետընթաց է արձանագրել:

Այսպիսով, Յովիկ Աբրահամեանի վարչապետութիւնը պետական, հասարակական իմաստով լրիւ տապալուել է, նա՝ որպէս վարչապետ, տապալուած գործիչ է:

Այն, ինչ փոխուել է նրա վարչապետութեան մէկ տարում, վերաբերում է ներիշխանական համակարգին, ներքաղաքական կեանքին: Աբրահամեանը մէկ տարի առաջ վարչապետ նշանակուեց ոչ իշխանական բեւեռի ակտիւութեան պայմաններում, այդ բեւեռի անմիջական աջակցութեամբ: Մինչեւ ընթացիկ տարուայ փետրուար, երբ Սերժ Սարգսեանը, ըստ էութեան, ցրեց Յովիկ Աբրահամեանի խնամի Գագիկ Ծառուկեանի գլխաւորած բեւեռը, ոչ իշխանական ուժերը հանդիսանում էին Յովիկ Աբրահամեանի կառավարութեան ամենաակտիւ եւ հետեւողական աջակիցներն ու պահապանները, իւրօրինակ վահանը: Փետրուարից յետոյ իրավիճակը կտրուկ է փոխուել: Եւ խնդիրը միայն ոչ իշխանական բեւեռի, այսինքն՝ Աբրահամեանի համար պաշտպանիչ վահանի բացակայութիւնը չէ:

Սերժ Սարգսեանը Աբրահամեանին ստիպեց մասնակցել Գագիկ Ծառուկեանի քաղաքական ոչնչացման գործին՝ ըստ էութեան, համակարգի առաջ նրան դնելով բարոյահոգեբանական առումով շատ ծանր դրութեան մէջ, ինչպէս նաեւ Յովիկ Աբրահամեանի վրայ թողեց ոչ իշխանական բեւեռի, այսպէս ասած, աւերակների տնօրինման պատասխանատուութիւնը: Այլ կերպ ասած՝ Յովիկ Աբրահամեանը, որ ցանկանում էր ոչ իշխանական բեւեռի միջոցով հասնել իշխանութեան ամենավերին կէտին՝ նախագահական պաշտօնին կամ, այսպէս ասած, «թագաւորութեանը», այսօր ստիպուած է, ըստ էութեան, «թագաւորել աւերակների» վրայ:

Այսպիսով՝ աւերակ տնտեսութիւնում եւ քաղաքական աւերակներ. ահա Յովիկ Աբրահամեանի վարչապետական պաշտօնավարման մէկ տարուայ արդիւնքը: Եւ եթէ քաղաքական աւերակների առումով ինչ-որ տեղ իրավիճակը ողջունելի է, եթէ նկատի ունենանք, որ խօսքը քրէաօլիգարխիկ համակարգի մասին է, որի պարագայում քաղաքականութիւնը ընդամէնը դեկլարատիւ շղարշ է, ապա տնտեսութեան տեսանկիւնից Յովիկ Աբրահամեանի վարչապետական պաշտօնավարումն ակնյայտօրէն կորստաբեր է Հայաստանի համար ամէն մի յաջորդ օրուայ տեսանկիւնից:

Եւ այս տեսանկիւնից, Յովիկ Աբրահամեանն իր վարչապետական գործունէութեան ընթացքում կարող է հասցնել մինչեւ «յոբելիանական» օրուայ աւարտ, այնուամենայնիւ պրակտիկ կարեւոր քայլ կատարել Հայաստանի տնտեսութեան բարելաւման ուղղութեամբ. հրաժարական ներկայացնել վարչապետի պաշտօնից: Թէեւ, իհարկէ, սա կը լինի իր կողմից հասանելիքը, որովհետեւ, ինչպէս փորձն է ցոյց տուել, բացարձակապէս պակաս նշանակութիւն չունի, թէ ով է նշանակուելու նրա փոխարէն: Սակայն գոնէ իրենից հասանելիք քայլը Յովիկ Աբրահամեանը կարող է անել՝ մէկ տարուայ ըստ էութեան անգործութեան ֆոնին: Թէեւ այս անգործութիւնն էլ յարաբերական է, քանի որ օլիգարխիկ համակարգի պահպանման առումով Յովիկ Աբրահամեանը անցնող տարում էլ հսկայ գործ արել է:

«ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Փաստաբանները ՀԽ-ի Անդամների Մեղադրանքները Անհիմն Են Համարում



*Դիմակաւոր ոստիկաններ Ժիրայր Սէֆիլեանին (ձախին) ու իր ընկերներուն կը տանին մեկուսարան*

Կալանաւորուած Ժիրայր Սէֆիլեանի ու համակիրների փաստաբանները յայտարարում են, որ քրէական գործի նիւթերում չկայ որեւէ ապացոյց, հիմնաւորում, թէ «Հիմնադիր խորհրդարան»-ը պատրաստուել է զանգուածային անկարգութիւններ կազմակերպել: Իրաւաբանները պնդում են, որ ընդդիմադիրները հետապնդւում են քաղաքական հայեացքների համար, գործը շինծու է:

Արա Զաքարեանը վկայակոչում է խուզարկութեան արձանագրութիւնը, որը կազմել են շուրջ երեք տասնեակ քննիչներ:

«Յայտնաբերուել եւ առգրաւուել են փայտեայ, մետաղեայ ձողեր, թուրեր, էլեկտրաշոկ եւ նմանատիպ այլ առարկաներ: Իւրաքանչիւր նմանատիպ առարկաներ, հաւաստիացնում են ձեզ, ցանկացած անձնաւորութեան բնակարան մուտք գործելուց հնարաւոր է յայտնաբերել: Որեւիցէ տրամաբանական կապ չկայ այդ ամէնը յայտնաբերելու եւ ասելու, որ սա նախապատրաստական աշխատանքներ էին զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու համար», - ասաց փաստաբանը:

«Ցանձնարարութեան ոչ պատշաճ եւ ոչ լիարժէք կատարման օրինակ է, երբ պետութիւնը քաղաքական հետապնդման շրջանակներում ինչ-որ մի սցենար է նախանշում, որը կատարողների անփութութեան պատճառով ձախողւում է», - ասաց Տիգրան Եգորեանը:

Փաստաբանները բողոքարկում են կալանքի որոշումները: Տիգրան Եգորեանը, սակայն, ասաց՝ քիչ յոյսեր կան, որ վերաքննիչ ատեանն էլ արդէն պատրաստի որոշումներ չունի դարակում- «Բոլորի կալանաւորման որոշումները գրուել են 25-40 րոպէի ընթացքում, մօտաւորապէս 8-10 էջանոց որոշումներ, ինչը ֆիզիկապէս անհնար է, եւ սա ակնյայտ է դարձնում այն, որ էս որոշումները եւս նախապէս սեւագրուել էին»:

Մինչ այդ, Շուշին ազատագրած Սէֆիլեանն ու ընկերները զրկուած են նաեւ հարազատներին տեսնելու, հեռախօսով խօսելու եւ օրուայ լուրերին հետեւելու հնարաւորութիւնից:

### Ընդդիմադիր Ուժերը Հակուած Չեն Մասնակցելու Սահմանադրական Բարեփոխումների Շուրջ Քննարկումներին

Դաշնակցութիւնից բացի, որեւէ այլ քաղաքական ուժ մինչեւ օրս առաջարկ չի ներկայացրել սահմանադրական բարեփոխումների վերաբերեալ: Մասնագիտական խմբի անդամ Գագիկ Ղազինեանի փոխանցմամբ, այս պահին յանձնաժողովն աշխատում է հիմնական դրոյթների ու մարդու հիմնարար ազատութիւնների գլխի վրայ:

Կառավարման խորհրդարանական մոդելի վերաբերեալ քննարկումները չեն սկսել, սակայն պատրաստ են ընդունել նաեւ այս մասով առաջարկութիւններ:

«Եթէ ցանկացողներ կան, կարող են ներկայացնել առաջարկներ, ընդ որում՝ ամբողջ հայեցակարգի ցանկացած դրոյթի վերաբերեալ: Այդ քննարկումների ժամանակ իրենց ցանկութեան դէպքում նաեւ, կարծում եմ, որ հնարաւորը է նաեւ իրենց մասնակցութեամբ այդ քննարկումները կազմակերպել», - նշեց Ղազինեանը:

Մէկ ամիս առաջ նախագահ Սերժ Սարգսեանը յանձնարարել էր մասնագիտական խմբին բարեփոխումները գլուխ առ գլուխ քննարկել քաղաքական ու հասարակական կառոյցների հետ: Առաջարկութիւնների ներկայացման վերջնաժամ կէտ սահմանուեց Մայիսի 5-ը:

Գագիկ Ղազինեանը չգիտի՝ մայիսի 5-ից յետոյ յանձնաժողովը կ՚ընդունի՝ նոր առաջարկներ , թէ՞ ոչ:

Մինչդեռ ՀԱԿ-ի համար այսօր արդէն յստակ է՝ Սերժ Սարգսեանի նախաձեռնած բարեփոխումներին չեն մասնակցի:

«Զենք կարող մասնակցել քննարկումներին, որը Սերժ Սարգսեանը ամբողջ աշխարհին անպայման ներկայացնելու է որպէս իր նախաձեռնութեան աջակցութիւն ընդդիմութեան կողմից, եւ որը լեգիտիմացնելու է այն սահմանադրական, իսկ իրականում հակասահմանադրական գործընթացը, որն ինքը սկսել է», - ասաց ընդդիմադիր քաղաքական ուժի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

Սահմանադրական բարեփոխումներին մասնակցելու ցանկութիւն չունի նաեւ ընդդիմադիր «Ժառանգութիւն»-ը: Մարտի 12-ի Սերժ Սարգսեան - «Ժառանգութիւն» երկխօսութիւնից մէկ ամիս անց կուսակցութիւնը յայտարարում է, որ իրենց առաջադրած 5 նախապայմանները անարձագանգ են մնացել:

«Ժառանգութեան» ներկայացուցիչ Արմէն Մարտիրոսեանի խօսքով՝ սահմանադրական բարեփոխումների համար Սերժ Սարգսեանին թէկուզեւ ձեւականօրէն, բայց հարկաւոր է ցոյց տալ, թէ երկրում կայ քաղաքական լայն կոնսոլիդացիա:

Մասնագիտական խմբի հետ հանդիպումներին մասնակցելու հետաքրքրութիւն առայժմ չի ցուցաբերել նաեւ ընդդիմադիր դարձած ԲՀԿ-ն:

Կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Վահան Բաբեանի խօսքով, այս հարցի շուրջ կուսակցութիւնը դեռ քննարկում չի էլ անցկացրել: Սակայն մի բան յստակ կարող են յայտարարել՝ կառավարման մոդելի փոփոխութեան հարցում Սերժ Սարգսեանի հետ համակարծիք չենք.

- «Խորհրդարանական կառավարման համակարգի վերաբերեալ մեր տեսակէտները մնում են անփոփոխ, քանի որ նման չկայացած կուսակցական համակարգում, Լեռնային Ղարաբաղի հարցի առկայութեան դէպքում չի կարելի առաջնային մանդատ տալ խորհրդարանին: Դա անհնար է»:

Քաղաքական ուժերից բացի, սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովին առայժմ առաջարկներ չեն ներկայացրել նաեւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները:

### ԱՄՆ Դեսպան. ՀՀ-ում Ծրագրերի Կրճատումը Կապ Չունի Քաղաքական Փոփոխութիւնների Հետ




*ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզ*

Հայաստանում ծրագրերի կրճատումը կապ չունի տարածաշրջանում քաղաքական որեւէ փոփոխութեան հետ: Դա կապուած է պիւտճէի կրճատման համատեքստում տիրող ընդհանուր իրավիճակի հետ: Այս մասին Ապրիլի 14-ին կայացած մամուլի ասուլիսում յայտարարեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզը:

Անդրադառնալով Հայաստանի եւ Թուրքիայի, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաշտեցման ծրագրերի կրճատմանը, դեսպանն ընդգծեց, որ այդ հաշտեցումը շարունակում է ԱՄՆ-ի համար առաջնահերթութիւն մնալ:

«Շարունակուելու են մշակութային, կրթական ոլորտներում իրականացուող ծրագրերը՝ նպատակ ունենալով զարգացնել միջմշակութային կապերը, որոնք, վերջապէս, կը յանգեցնեն յարաբերութիւնների բարելաւմանը: Մենք շարունակելու ենք ուշադրութիւն դարձնել այդ ուղղութիւններին, պարզապէս կրճատուելու է իրականացուող ծրագրերի թիւը»,- յաւելեց Ռիչարդ Միլզը:

Պատասխանելով հարցին, կարելի՞ է, արդեօք, ասել, որ ԱՄՆ-ն կամ USAID-ն հիասթափուած են Հայաստանում իրականացուող ծրագրերի արդիւնքներից, Հայաստանի USAID-ի գրասենեակի ղեկավար Քարեն Հիլարդն ասաց. «Ամենեւին ոչ: Հայաստանում USAID-ի ծրագրերը կարելի է որպէս օրինակ ներկայացնել: Մենք գոհ ենք մեր ծրագրերի արդիւնքներից, եւ ես ցանկանում եմ ասել, որ մեծագոյն հպարտութիւն եմ զգում այստեղ գտնուելու ընթացքում իմ թիմի ձեռքբերումների համար»:

### Բաց Երկնքի Քաղաքականութիւնը Չի Հրապուրել Աւիաընկերութիւններին

Նախորդ տարի միակ ընկերութիւնը, որ մուտք էր գործել ազատականացուած շուկայ, Air Armenia-ն էր, որը սակայն կարճ ժամանակ անց պարտքեր կուտակեց եւ դադարեցրեց չվերթները:

2013 թուականին կառավարութեան կողմից յայտարարուած բաց երկնքի քաղաքականութեամբ Հայաստանի օդային տարածքը ազատականացուեց՝ հնարաւորութիւն տալով պիւտճէտային ընկերութիւնների ներգրաւել, որոնք աւելի համեստ ծառայութիւններ մատուցելով շուկայականից ցածր սակագներ են առաջարկում:

Էկոնոմիկայի նախարար Կարէն Ճշմարիտեանը օրերս Ազգային ժողովի ամբիոնից յայտարարեց, որ դեռ բանակցում են այս ուղղութեամբ:

Ճշմարիտեանը նաեւ նշեց, որ նախորդ տարուայ համեմատ ուղեւորափոխադրումներն աւելացել են 21 տոկոսով, եւ հենց սա էլ վկայում է բաց երկնքի քաղաքականութեան յաջողութեան մասին:

Քաղաքացիական աւիացիայի նախկին պետ Շահէն Պետրոսեանը թռիչքների յաճախականութեան եւ ուղեւորափոխադրումների աճը հիմնականում կապում է արտագաղթի հետ: Ըստ նրա՝ այս ցուցանիշները չեն կարող վկայել, թէ ծրագիրը յաջողել է:

« Ցանկացած երկիր էլ վերցնեք, իրենց մօտ աւիափոխադրումների աճ կայ, դա չի կարելի պայմանաւորել բաց երկնքի քաղաքականութեամբ: Մեր ժամանակ էլ աւելի մեծ էր աճը, նոյնիսկ 90-ական թուականներին մեզ մօտ Վրաստանից էին գալիս, այստեղից թռչում, որովհետեւ մեր գները շատ աւելի մատչելի էին: Իսկ հիմա հակառակ տենդենցն է: Հիմա այստեղից են գնում եւ Թբիլիսիի, Քութաիսիի կամ Կիեւի օդանաւակայաններից մեկնում»,- ասաց Պետրոսեանը:

Այս օրերին, օրինակ, Երեւանից Վարշաւա կարելի է մեկնել ծախսելով 200-210 հազար դրամ, մինչդեռ Վրաստանի Քութաիսիի օդանաւակայանից նոյն ուղղութեամբ տոմսն արժէ 80 հազար դրամ՝ 2.5 անգամ էժան: Ըստ Շահէն Պետրոսեանի, Հայաստանում էլ կարող էին նման low cost ընկերութիւններ գործել, ամենայնդէպս, ինքը նման ընկերութիւն հիմնելու առաջարկով դիմել է էկոնոմիկայի նախկին նախարարին, սակայն առաջարկն անպատասխան է մնացել:

## Իտալիայի ԱԳ նախարար. Անգարայի Արձագանգը Հռոմի Պապի Ելոյթին Արդարացուած Չէ

Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած պատարագի ժամանակ Հռոմի Ֆրանչիսկոս Պապի ելոյթի վերաբերեալ Թուրքական իշխանութիւնների արձագանգն ու կոշտ արտայայտութիւններն արդարացուած չեն: Ապրիլի 13-ին նման տեսակէտ է յայտնել Իտալիայի ԱԳ նախարար Պաոլո Ջենտիլոնին, հաղորդում է ՏԱՍՍ-ը:

« Թուրքական իշխանութիւնների կոշտ տոնայնութիւնն ինձ թւում է արդարացուած չէ, յատկապէս հաշուի առնելով, որ 15 տարի առաջ Յովհաննէս Պօղոս II Պապն արդէն 100 տարի առաջ տեղի ունեցած իրադարձութիւններն անուանել էր ցեղասպանութիւն»,-ասել է Ջենտիլոնին:

Նա յաւելել է. «Մենք միշտ երկու բարեկամ երկրներին՝ Հայաստանին ու Թուրքիային, հրաւիրել ենք երկխօսութեան՝ նման իրավիճակներից խուսափելու համար, որոնք կարող են յարաբերութիւնների վերականգնման խոչընդոտ դառնալ»:



Իտալիոյ ԱԳ նախարար Պաոլօ Ջենտիլոնի

## ԵԽԽՎ. Սահմանադրական Բարեփոխումները ՀՀ-ում Պէտք Է Համապատասխանեն ԵԽ Չափանիշներին

Շատ կարեւոր է, որ սահմանադրական բարեփոխումները Հայաստանում համապատասխանեն ԵԽ չափանիշներին: Այս մասին, Ապրիլի 13-ին, ԱԺ-ում լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարել է ԵԽԽՎ նախագահ Անն Բրասերը:

Նրա խօսքով՝ սահմանադրական բարեփոխումները հսկայական պատասխանատուութիւն են երկրի համար այն իմաստով, որ դրանք քաղաքական կուսակցութիւններին քաղաքական կոնսենսուսի կոչ են անում:

«Ինչպիսին էլ լինի բարեփոխումների բովանդակութեան վերաբերեալ վերջնական որոշումը, ԵԽ չափանիշներին համապատասխանութիւնը վճռական նշանակութիւն ունի»,-ընդգծել է Բրասերը:

Խօսելով Լեռնային Ղարաբաղի հարցի մասին ԵԽԽՎ նախագահ Անն Բրասերը ասել է որ այդ հարցը իսկապէս յուզում է Եւրոպային:

«Ղարաբաղն իսկապէս պէտք է յուզի մեզ բոլորիս, քանի որ վերաբերում է քաղաքացիների, որոնք ԵՄ անդամ եւրոպական 47 երկրների ընտանիքի անդամ են: Երկխօսութիւնը միակ ելքն է, որի օգնութեամբ պէտք է լուծում գտնուի: Բռնութիւնը երբեք պատասխան չպէտք է լինի»,-յայտարարել է ԵԽԽՎ նախագահը:



ԵԽԽՎ նախագահ Անն Բրասեր ծաղկեպսակ կը զետեղէ Եղեռնի Յուշարձանին

ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործում իր համեստ ներդրումն ունենալու համար ԵԽԽՎ զեկոյց է պատրաստում Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ: Նրա խօսքով՝ այդ փաստաթուղթը միջամտութիւն չի լինի ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին, եւ իրենից աւելի շատ առաջարկ կը լինի, քան ցուցում:

Անն Բրասերն ընդգծել է, որ զեկոյցը հաւասարակշռուած լինելու համար ԵԽԽՎ-ում հայկական պատուիրակութեանը խորհուրդ են տալիս մասնակցել այդ գործընթացին:

Հայաստան այցի ընթացքում Անն Բրասերը հանդիպել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի, վարչապետ Յովիկ Աբրահամեանի, խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակեանի եւ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ:

## Գերմանիան Զգուշաւոր Է Մնում Հայոց Ջարդերը Ցեղասպանութիւն Որակելուց

Գերմանիայի Դաշնային Հանրապետութեան կառավարութիւնը ձեռնպահ կը մնայ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի հանդէպ իրականացուած հալածանքները ցեղասպանութիւն եզրով որակելուց եւ քայլեր կը ձեռնարկի կողմերին հաշտեցնելու ուղղութեամբ: Այս մասին ապրիլի 13-ին յայտարարել է կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչ Քրիստիանէ Վիրթցը, գրում է Deutsche Welle-ն:

Ըստ նրա՝ հնարաւոր չէ որեւէ կողմին ստիպել վերաիմաստաւորել պատմութիւնը: «Այդ հարցով պէտք է զբաղուեն մասնագէտները, պատմաբանները եւ շահագրգիռ երկրները», նշել է Վիրթցը՝ պարզաբանելով, որ դա Գերմանիայի խնդիրը չէ:

Վիրթցը նշել է, որ Բեռլինում իշխանութիւնները չեն մեկնաբանում հայերի զանգուածային ջարդերի մասին Ֆրանչիսկոս Առաջինի յայտարարութիւնը:

Նշենք, որ Ապրիլի 24-ին Գերմանիայի Բունդեսթագում Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կապակցութեամբ քննարկում է ընթանալու: Քրիստոնեայ դեմոկրատների, Քրիստոնեայ սոցիալիստների եւ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւններից կազմուած իշխող կոալիցիան, ինչպէս նաեւ Ձախերն եւ Կանաչները Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւ կը ներկայացնեն: Ընդ որում, իշխող կոալիցիայի բանաձեւում ասւում է «հայերի հալածանքների եւ ջարդերի յիշատակի» մասին, իսկ միւս խմբակցութիւնները բացայայտ խօսում են դրանք ցեղասպանութիւն որակելու մասին:

## «France 24». Ապագայում Թուրքիայի Կողմից Ցեղասպանութեան Ճանաչումը Հնարաւոր Է

Թուրքիան բարձրացնում է ձայնը Հռոմի Պապի յայտարարութիւնից յետոյ, որը հրապարակայնօրէն ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: Այսպիսի դիտարկում է արել «France 24» հեռուստաալիքը՝ մեկնաբանելով Ապրիլի 12-ին Վատիկանում մատուցուած պատարագի ժամանակ Ֆրանցիսկոս Պապի խօսքերը: «Պապի յայտարարութիւնը մեծացնում է Անգարայի կողմից ճնշումը, բայց այն կարող է առաւել բարդացնել Թուրքիայի հետ նրա յարաբերութիւնները»,- նշել է հեռուստաալիքը:

Ստամբուլում «France 24»-ի թղթակից Ֆաթմա Կիզիլբոգան, վկայակոչելով Թուրքական իշխանութիւնների փաստարկները, նշել է, որ Թուրքիայի կառավարութիւնն «անակնկալի է եկել, որ Պապը միայն հայերի օգտին դիրքորոշում է ներկայացրել՝ ոչ մի խօսք չասելով մահմեդականների եւ կրօնական այլ փոքրամասնութիւնների մասին, որոնք նոյնպէս այդ ժամանակաշրջանում զոհուել են»:

«Թուրքերը, կարծես, դեռեւս պատրաստ չեն ընդունել իրենց անցեալի այդ մութ էջերը»,- նշել է Ֆաթմա Կիզիլբոգան: Սակայն վերաբերմունքը սկսում է փոխուել:

«France 24»-ի թղթակիցը մասնակցել է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով կազմակերպուած միջոցառման, որն անցկացնում են «այդ ցեղասպանութեան ճանաչման օգտին հանդէս եկող Թուրքերը»: Հետեւաբար, նրա կարծիքով, Անգարայի կողմից հետագայում ցեղասպանութեան ճանաչումը հնարաւոր է, եթէ անգամ դրա համար եւս մի քանի տարի պահանջուի:

## Հալէպի Հայկական Թաղամասերը Հրետակոծուել Են, Կան Զոհեր Եւ Վիրաւորներ

Վերջին օրերին Հալէպի հայկական թաղամասերը կրկին ուժգին հրետակոծւում են: Ըստ պաշտօնական աղբիւրների՝ ութ մարդ զոհուել է, մի քանի տասնեակը, այդ թւում՝ հայեր, վիրաւորուել:

Անընդմէջ հրթիռակոծութեան հետեւանքով յատկապէս տուժել է Սուլէյմանիէ թաղամասը: Հալէպի «Գանձասար» թերթի թղթակից Զարմիկ Պողիկեանը «Ազատութեան» հետ զրոյցում նշեց, որ վիրաւորուածներից Կայծակ Յովակիմեանն ու նրա դուստրը այս պահին հիւանդանոցում են: Շէնքում բռնկուած հրդեհի հետեւանքով Յովակիմեանները այրուածքներ են ստացել:

«Աղջկայ մը պարագան կայ, որ աչքը լուրջ վնաս կրեց: Երկու անգամ վիրահատուեցաւ: Բայց կեանքին վտանգ չէ սպառնացած մինչեւ այժմ, բարեբախտաբար: Ուղղակի աղետալի էր վիճակը, 4 շէնքեր ամբողջութեամբ փուլ եկան՝ բնակիչները մէջը: Ռմբակոծումները երեկոյեան ժամը վեցէն սկսան մինչեւ առաւօտեան ժամը 8-ը: Եւ տակաւին մինչեւ օրս փլատակներու տակէն դիակներ կը հանեն»,- պատմեց Պողիկեանը:

Վնասուել է նաեւ նոյն թաղամասում գտնուող «Սիմոն Վրացեան» ազգային կենտրոնը, որը ժամանակաւորապէս որպէս առաջնորդարան էր ծառայում, այն այժմ կիսաքանդ է: Հնարաւոր է եղել փրկել առաջնորդարանի արխիւների միայն մի մասը: Թաղամասից ոչ հեռու գտնուող Կիւլպէնկեան վարժարանի եւ հայկական հինգ դպրոցների աշխատանքներն անվտանգութեան նկատառումներով դադարեցուել են:

«Այսօր իշխանութիւնը փակ յայտարարեց վարժարանները, որովհետեւ վտանգաւոր է վիճակը: Սիւլէյմանիյէն ամենաապահով թաղամասն էր, եւ շատ մը շրջաններէն մարդիկ այդտեղ տեղափոխուած էին, բայց ապահով թաղամասերն էլ թիրախ դարձան, այլեւս քաղաքի մէջ ապահով տեղ չմնաց համարեայ: Ժողովրդի վիճակն իսկապէս ցաւալի է, որովհետեւ անապահովութիւն կայ, շատ մը թաղամասեր արդէն ամայի դարձած են»,- նշեց Պողիկեանը:

Էլեկտրաէներգիա մատակարարւում է օրական մի քանի ժամով, եւ արդէն երեք շաբաթ է՝ ինտերնետ կապ ընդհանրապէս չկայ: Փոխարէնը մի խումբ սիրիահայեր՝ տարբեր երկրներից, կոչ են անում Հայաստանի կառավարութեանը արտահերթ նիստ անցկացնել եւ քայլեր ձեռնարկել սիրիահայ մանուկներին փրկելու համար:

## ԱՄՀ. 2015-ին Հայաստանի Տնտեսութիւնը Անկում Կը Գրանցի

Համաձայն Արժոյթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ)՝ աշխարհի տնտեսական հեռանկարների վերաբերեալ զեկոյցի՝ այս տարի Հայաստանը կը փակի տնտեսութեան 1 տոկոս անկումով: World Economic Outlook-2015 զեկոյցի հեղինակները կանխատեսում են, որ 2016-ին Հայաստանի տնտեսութիւնը 0 տոկոս աճ կը գրանցի:

Ըստ ԱՄՀ-ի կանխատեսումների՝ Հարաւային Կովկասում Հայաստանը միակն երկիրն է, որի տնտեսութիւնը անկում կապրի: Վրաստանը եւ Ադրբեջանը ինչպէս այս տարի, այնպէս էլ յաջորդ տարի աճ կը գրանցեն (Վրաստանը 2 եւ 3 տոկոս, Ադրբեջանը՝ 0.6 տոկոս եւ 2 տոկոս):

ԱՄՀ-ի զեկոյցի համաձայն՝ Ռուսաստանի տնտեսութիւնը, որի միտումները մեծ կարեւորութիւն ունեն Հայաստանի համար, անկում կը գրանցի 2015-ին եւ 2016-ին՝ համապատասխանաբար 3.8 եւ 1.1 տոկոսով:

# Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանի «Հայրենիքի Ազատագրութեան Բանակին Համոզուած զինուորները» գիրքի շնորհանդէսը

Շարունակուած էջ 1-էն

Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանի «Հայրենիքի Ազատագրութեան Բանակին Համոզուած զինուորները» գիրքի շնորհանդէսին նուիրուած սոյն միջոցառումը կազմակերպուած էր Ս.Դ.Հ.Կ. Տեղեկատուութեան դիւանին կողմէ:

Կազմակերպող մարմնի անունով հանդիսութեան բացումը կատարեց օրուան հանդիսավար Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի փոխ-ատենապետ Սուրէն Խուտանեան:

ազատագրութեան եւ Ջարդարարներու դէմ մղուած պայքարին մութ ծալքերուն, զայն հարստացնելով նոր փաստաթուղթերով:

«Հայրենիքի Ազատագրութեան Բանակի համոզուած զինուորները» հատորը հանգամանօրէն ներկայացուց ծանօթ մտաւորական եւ հրապարակագիր Պր. Ոսկան Մխիթարեան: Ան մասնաւորաբար ընդգծեց «...բազում են վկայութիւնները Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան մասին, սակայն այդ բոլորի կողքին



Դոկտ. Կարօ Մոմճեան

Ան մէկ վայրկեան յոտնկայս լռութեան հրաւիրեց ներկաները, յարգելու համար մեր բիւրաւոր նահատակներու յիշատակը: Այնուհետեւ իր բացման խօսքին մէջ պանծացուց ազատատենչ հայ մարտիկներու խիզախ սխրագործութիւնները հայրենիքի ազա-

Տէր Աբէլ Քահանան, իր բանասիրական ներհուն աշխատանքով, կու գայ ամբողջացնելու շարքը արժէքաւոր ուսումնասիրութիւններու, որոնք կը ներբողեն Հնչակեան Կուսակցութեան բոլոր հայրենանուէր գործունէութիւնները: Այս գիրքը կը պանծացնէ



Ոսկան Մխիթարեան

տութեան ի խնդիր:

Պատմաբան Դոկտ. Կարօ Մոմճեան իր խօսքին մէջ հպանցիկ ակնարկով մը ներկաները փոխադրեց ցեղասպանութենէն առաջ տիրող քաղաքական մթնոլորտը, մասնաւորաբար պալքանեան պատերազմի, սերպերու եւ պուլկարներու ու օսմանցիներու հակամարտութիւնները: Ան արդարանալի գտաւ Ռումանիոյ Քէօսթէնճէ քաղաքի մէջ Հնչակեան ղեկավարութեան առած խիզախ որոշումը օսմնեան տիրակալութենէն դուրս գալու հարցին մէջ: Սակայն ափսոս որ դաւաճանի մը մատնութեան պատճառով խափանուեցաւ ամէն ինչ:

Բանախօսի գնահատականով Դոկտ. Աբէլ քահանայի այս գիրքը նոր լոյս կը սփռէ հայոց

Հնչակեան կուսակցութեան վաստակը, հայ ժողովուրդի ծառայութեան եւ գոյատեւման պայքարին մէջ:

Ոսկան Մխիթարեան յայտնեց թէ հեղինակը իր գիրքը բաժնած է երկու մասի: Առաջինը թէ ինչպէս կազմուեցաւ Հնչակեան կուսակցութիւնը Ժընեւի մջ: Երկրորդին մէջ Ատանայի Ջարդերէն մինչեւ Մեծ Եղեռն եւ ապա Զուիցերիոյ ժողովուրդին ցուցաբերած մարդասիրական օգնութիւններու եզակի կեցուածքը: Իր եզրակացութեան մէջ ան ըսաւ «...Պարտինք պատրաստել ղեկավարութիւն մը, որ կրնայ մեր փայփայած յոյսերն իրականացնել մտաւորական գիտական նոր սերունդի պատրաստութեամբ»:

Վերջին խօսք առնողն էր



Նունէ Աւետիսեան



Անահիտ Ներսէսեան

Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեան: Ան շնորհակալութիւն յայտնելէ ետք սոյն միջոցառումը նախաձեռնողներուն, պատմական ակնարկ մը նետեց ցեղասպանութեան հետ առնչութիւն ունեցող կայսերական Գերմանիոյ վրայ եւ ընդգծեց որ եթէ Գերմանիա ազդու կերպով միջամտէր Մեծ Եղեռնը տեղի չէր ունենար: Այս կապակցութեամբ ան պատմական երեք իրադրութիւններ նշեց, որոնք կ՛ապացուցանէին գերման զօրավարներու բացայայտ միջամտութիւնները թրքական բանակի եւ կառավա-

Աւետիսեան ասմունքելով Յ. Շիրազի «Գտայ» եւ Գէորգ Էմինի «Մենք» ստեղծագործութիւնները: Իսկ օփերային երգչուհի Անահիտ Ներսէսեան երգեց Բ. Կանաչեանի «Օրօր»ը եւ «Կիլիկիա»ն: Երկու ելոյթներն ալ արժանացան ներկաներու ջերմ գնահատանքին:

Յայտագրի աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ.ի Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան: Ան շնորհակալութիւն յայտնելէ ետք շնորհանդէսի մասնակիցներուն, բարձր գնահա-



Սուրէն Խուտանեան



Գաբրիէլ Մոլոյեան

րական վերնախաւի մօտ:

Իր եզրակացութիւնն այն էր որ «Մեր ղեկավարները եւ բոլոր Հնչակեան հերոս նահատակները՝ ազատ եւ անկախ Հայաստան մը ունենալու ճամբուն վրայ նահատակուեցան: Այդ երազը իբրեւ կտակ մեզի փոխանցեցին, որպէսզի հայ ժողովուրդի զաւակներն ու յառաջիկայ սերունդները այս կտակի իրականացման պայքարը մղեն»:

Օրուան գեղարուեստական բաժինին իրենց մասնակցութիւնը բերին արուեստագիտուհի Նունէ

տեց Դոկտ. Աբէլ Քահանայի արդիւնաշատ գործունէութիւնն ու վաստակը, մասնաւորաբար պատմաբանասիրական եւ հետազօտական բնագաւառին մէջ:

Աւարտին՝ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որուն ընթացքին, Դոկտ. Աբէլ Քհնյ. սիրով մակագրեց իր գիրքերը:

Իր տեսակին մէջ եզակի ձեռնարկ մըն էր որուն համար շնորհակալութիւն յայտնեցին բոլոր ներկաները, իրենց ստացած հոգեկան բաւարարութեան եւ յիշատակելի երեկոյին համար:

## 100-Ամեակի Միջ-Համայնքային Ոգեկոչում

Շարունակուած էջ 1-էն

յայտնելով նաեւ Երեւանն ու Լոս Անճելոսը քոյր քաղաքներ կոչուելուն մասին:

Բացառիկ գնահատանքի արժանի է սոյն պատմական միջոցառումի յաջողապէս կազմակերպող 100-ամեակի վարչութիւնն ու յարակից յանձնախումբերը:

www.massisweekly.com

## ՀԲԸՄ-Ի ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ



*Ապրիլ 8-10, 2015, բացառիկ ցուցահանդէս մը տեղի ունեցաւ Լոս Անճելոսի «Սքիրպոլ» մշակութային կեդրոնին մէջ նուիրուած Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին:*

*Արդարեւ Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետներու համախմբումին կողմէ կազմակերպուած սոյն բարձրորակ միջոցառումի բացման օրը ներկայ էին աւելի քան 500 հոգիներ: Այցելուները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին հարազատ կրկնօրինակները միջազգային մամուլի առաջին էջերու այն մեծադիր նկարներուն, որոնք կ'արտացոլացնէին հարիւր եւ աւելի տարիներ առաջ սուլթանական Թուրքիոյ կողմէ գործադրուած սարսափելի ոճիրներու հագուագիւտ տեսարանները:*

*Այս առթիւ ցեղասպանութիւնը դատապարտող եւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատին զօրավիգ կանգնող ելոյթներով հանդէս եկան գոնկրէսականներ Պրէնտ Շէրման եւ Ատամ Շիֆ (տեսաերիզով), Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Վալերի Մկրտումեան, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Տօքթ. Յարութ Եաղսզեան, Գուրգէն Պէրքսանլար, Հայկ Տեմոյեան: Ներկաներուն համար հաճելի անակնկալ մը եղաւ Իրանահայ Միութեան երգչախումբի հայրենասիրական երգերով ելոյթը խմբավարութեամբ Միքայէլ Աւետիսեանի:*

*Ցուցահանդէսի այցելողները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին համաշխարհային ճանաչում ունեցող եւրոպական մամուլի առաջին էջերու (Le Rire, The London News, La Caricature, Le Secolo Illustrado, Le Petit-Parisien, The Graphic, The National Geographic Magazine եւայլն), լուսապատճէնները, որոնց մէջ առկայ էին հայաջինջ Թուրքի գործադրած մահասփիւռ տեսարաններն ու գրութիւնները:*

*Ցուցահանդէսի երկրորդ օրը յատկացուած էր շահեկան հարցազրոյցի մը, որուն նիւթն էր Հայոց Ցեղասպանութեան հետ առնչուող տնտեսական հարցերը: Սոյն միջոցառման զեկուցաբերն էր Ամսթերտամի (Հոլանտա) Ուլթրեխթ համալսարանի Պատերազմի, Ողջակիզութեան եւ Ցեղասպանութեան հետազօտութեան պատմութեան օգնական փրոֆեսոր Դոկտ. Ուկուր Իւմիթ Իւնկէօր: Ան վիճակագրական հետաքրքրական տուեալներով բացայայտեց օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած Ջարդերու տնտեսական հետեւանքները (կալուած, ինչքեր, գոյքեր, դրամատնային հաշիւներ, գործատեղիներ, երկրագործական տարածքներ, ազգապատկան հաստատութիւններ, եւայլն):*

*Իր ելոյթի աւարտին երիտասարդ պատմաբանը շեշտը դրաւ պահանջատիրութեան անհրաժեշտութեան վրայ, իր զօրակցութիւնը յայտնելով հայ ժողովուրդի արդար դատին:*

*Եռօրեայ ցուցահանդէսի վերջին օրը Ապրիլի 10ին տեղի ունեցաւ կլոր սեղան - քննարկում (Panel Discussion) պարտադրաբար իսլամացած հայերու մասին: Գլխաւոր զեկուցաբերներն էին Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան*

*Շար.ը էջ 18*

## ՀՐԱՆԴ ԿԻՒՉԷԼԵԱՆԻ «ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏՈՒՆԸ-ՄՆԱՑՈՐԴԱՑԻ ՏՈՒՆ ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ» ԳԻՐՔԻՆ ԱՆԳԼԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ



**Էտուին Մինասեան, Վեր. Վաչէ Էքմէքճեան, Զաւէն Խանճեան**

*Պոլսոյ Պատանեկան Տունը-Մնացորդացի Տուն Դարձի Պատմութիւն մը գիրքին Անգլերէն հրատարակութիւնը արդարօրէն կը պատուէ անոր հեղինակին՝ Հրանդ Կիւզէլեանի պայքարը յետ Ցեղասպանութեան հանգրուաններուն: Կիւզէլեան, հարիւրաւոր Հայ պատանիներ ազատագրած էր Թուրքիոյ ներքին գաւառներէն, որոնցմէ մէկն էր յայտնի, խիզախ լրագրող՝ Հրանդ Տինք եւ իր կինը Ռաքէլ:*

*Գիրքին Անգլերէն հրատարակութիւնը՝ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) կողմէ, կարելի դարձած էր Տօքթ, Հրայր Ս. եւ Ճիւլի Ահարոնեաններու, եւ Տօքթ. Վիգէն եւ Սօսի Ահարոնեաններու ազնիւ նուիրատուութեամբ, ի յիշատակ իրենց հօր՝ Վեր. Դոկտ. Յովհաննէս Ահարոնեանի, որ Ջատագով մը եղած էր Հրանդ Կիւզէլեանի առաքելութեան եւ կնքահայրը «Պոլսոյ Պատանեկան Տուն» անուանակոչումին:*

*«Երբ այս գիրքը կարդացի 2007ին, համոզուեցայ թէ ան պէտք է անպայման տրամադրելի դառնար Հայերէն ընթերցող հասարակութենէն անդին» ըսաւ Զաւէն Խանճեան, Գործադիր Տնօրէնը ԱՀԱԸ-ի: «Ակադեմականներ, ցեղասպանութիւն ուսումնասիրողներ եւ պատմաբաններ պէտք է կարդան Կիւզէլեանի ականատեսի վկայութիւնը Արեւմտեան Հայաստանի մէջ տեղի ունեցող մշակոյթի ոչնչացման գործունէութիւններուն մասին, ինչպէս նաեւ անոր դիմադրութիւններուն՝ ի դէմ Թուրք պաշտօնեաներու մերժման, հարստահարման եւ դատապարտման գործողութիւններուն՝ Մնացորդացի մը Տուն Գալու ճանապարհին տարուած պայքարին:*

*ԱՀԱԸ-ի եւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան (ՀԱՀԱԵՄ) Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Միացեալ Յանձնախումբին կողմէ կազմակերպուած Անգլերէնի Թարգմանութեան այս գիրքին շնորհանդէսը տեղի ունեցաւ Երեքշաբթի, Ապրիլ 7-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Կլէնտէյլի Իրանահայ Միութեան Կեդրոնին մէջ: Յայտագիրը վարեց Դոկտ. Յասմիկ Պարան:*

*Յայտագրին խօսնակները ներկայացուցին գիրքին երեք տարբեր երեսներն ու անոնց ձգած ազդեցութիւնը: Իրաւաբան Էտուին Մինասեան՝ Պոլսահայերուն Միութեան Կեդրոնական Մարմինի Ատենապետ եւ Հայ Իրաւաբաններու Միութեան Վարչութեան անդամ, ներկայացուց Կիւզէլեանի գործունէութեան ժամանակաշրջանը Թուրքիոյ մէջ:*

*Թուրքիա շարունակ կը ճնշէր փոքրամասնութիւնները, բարձր հարկերով, կալուածներու գրաւումով եւ ոստիկանութեան խիստ հսկողութեամբ: «Յիսունական Թուականներու կէսերուն՝ Հայերու եւ Յոյներու հանդէպ ուղղուած Ջարդերէն անմիջապէս ետք, Կիւզէլեան մեկնարկեց իր առաքելութիւնը, առանց նկատի ունենալու իր շրջակայ միջավայրի մտահոգութիւնները: Ան ունէր վճռակամութիւն եւ ամուր հաւատք: Ան գիտէր որ այս մէկը գոյատեւման պայքար էր,- ըսաւ Իրաւաբան Մինասեան:*

*Վեր. Վաչէ Էքմէքճեան, ՀԱՀԱԵՄ-ի ներկայացուցիչ Սուրիահայութեան Զօրակցութեան Հիմ-*

*Շար.ը էջ 18*




## Կլենտէլի Ընկերային ծառայութեան կեդրոնին մէջ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ «ԿԸ ՅԻՇԵՄ, ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ»

*ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ*

*Երեքշաբթի, Ապրիլ 8, առաւօտեան ժամը 10-ին, Կլենտէլի մէջ գործող Լոս Անճելոսի Գաւառի ընկերային ծառայութեան շէնքին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած կոկիկ և տպաւորիչ ձեռնարկ մը, կազմակերպուած՝ կեդրոնի հայ պաշտօնեաներուն կողմէ:*

*Լոս Անճելոս Գաւառը ունի մօտ 11 միլիոն բնակչութիւն, 88 քաղաքներ և 134-է աւելի շրջաններ և աւաններ: Այս Գաւառին մէջ կը գործեն 34 բաժանմունքներ՝ 80 հազար պաշտօնեաներով, կրթական, դատական, ընկերային ծառայութեան, առողջապահական, հրշէջներու եւայլն: Ընկերային ծառայութեան բաժինը ունի մօտ 40-է աւելի կեդրոններ և բաժանմունքներ: Կլենտէլի կեդրոնը ունի մօտ 450 պաշտօնեաներ, որոնց մէջ նկատառելի թիւ մը կը կազմեն ամերիկահայերը:*

*Հանդիութիւնը սկսաւ Ամերիկեան և Հայկական օրհներգներու երգեցողութեամբ: Այդ օր իրենց ներկայութեամբ ձեռնարկը կը պատուէին գոնկրեսմէն Ատամ Շիֆի ներկայացուցիչ՝ Մարի Յովակիմեան, որ գոնկրեսմէնին վիտէոյի վրայ նկարահանուած սրտի խօսքը բերած էր, որ ցուցադ-րուեցաւ այդ օր Մարի Յովակիմ-եանի կողմէ և որ արժանացաւ ներկաներու ջերմ ծափահարութ-իւններուն: Ներկայ էին Լոս Անճելոս Գաւառի վերակացու՝ Մայք Անթոնովիչի ներկայացուցիչը՝ Ռիթա Հաճի-Մանուկեան, որ սրտի խօսքէ ետք յիշեց, որ հուշակագիր մը պատրաստուած է այս առիթին համար, որ պիտի ղրկուի շուտով: Անձամբ ներկայ էին Լոս Անճելոսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ Փօլ Գրիգորեան, Կլենտէլի քաղաքապետ՝ Զարեհ Սինանեան, Կլենտէլի Կեդրոնի ղեկավարներէն՝ Կիյերմօ Արսի և Իվոն Փորթիօ, ընդհանուր տնօրէնուհիի տեղակալը/Division Head-ը:*

*Հանդիսավարուհի Աննա Ղազարեան բարի գալուստի տպաւորիչ և գեղեցիկ խօսքերով ողջունեց ներկայ բարձրաստիճան հիւրերն ու հոծ թիւով հանդիսականները: Ան շնորհակալութիւն յայտնեց կեդրոնի տնօրէնին, նման ձեռնարկ մը արտօնելուն համար: Ապա, Աննա Ղազարեան յաջորդաբար ելոյթ ունենալու համար հրաւիրեց բարձրաստիճան հիւրեր և արուեստագէտներ:*

*Բոլոր խօսողները մեծապէս գնահատեցին DPSS-ի կեդրոնէն ներս կազմակերպուած այս ձեռնարկի պատասխանատուները: Շեշտեցին, թէ հայ ժողովուրդը այս տարի որդեգրած է «Կը յիշեմ և կը պահանջեմ» լոզունգը: «Հայ ժողովուրդը, հակառակ իր դիմագրաւած հրէշային սպանդին, շնորհիւ իր ապրելու կամքին, աշխատասիրութեան և հայրենիքին, այսօր աշխարհի վրայ 10 միլիոն հայ կ'ապրի, կըստեղծագործէ»,— ըսաւ Փօլ Գրիգորեան:*

*Գեղարուեստական բաժնին մասնակցեցան, դուդուկահար՝ Յարութիւնեան եղբայրները, պարով ելոյթ ունեցաւ Կլենտէյլի հանրածանօթ Վանուշ Խանամիրեան պարախումբի մենապարուհի՝ Աննա Թորոսեան: Թէ նուագողները և թէ մենապարողը արժանացան ներկաներու երկարատեւ ծափահարութ-եան:*

*Վերջաւորութեան, բոլոր ներկաները հիւրասիրուեցան կազմակերպիչ Յանձնախումբին կողմէ:*

*Այդ օր, որպէս նմուշներ ցուցադրուեցան Հայոց Ցեղասպանութենէն և հայ մշակոյթէն նկարներ, որոնք պատրաստուած էին գաղութիս Միացեալ Մարմնին կողմէ անգլերէն լեզուով, ծագումով ոչ հայ պաշտօնեաներուն համար:*

*Ջերմօրէն կը շնորհաւորենք այս ձեռնարկը կազմակերպող բոլոր պատասխանատուները, գլխաւորութեամբ Ռիմա Յակոբեանի, Վահագն Աբգարեանի, Ժորժ Մարտոյեանի, Շաքէ Յովսէփեանի և նկարիչ Սարգիս Արապեանի:*

*Արդարեւ, Սփիւռքի մէջ ապրող հայերուն առաջին գործն է հայ մնալ, ապա Հայաստանը, հայ մշակոյթը և մանաւանդ Հայ Դատը ծանօթացնել իրենց ապրած երկիրներու ժողովուրդներուն: Այս ձեռնարկը հոյակապ մէկ օրինակն է սփիւռքահայու ազգանուէր աշխատանքներուն:*

*Թող մեր նահատակներու յիշատակը յաւերժ ապրի մեր բոլորի սրտին ու մտքին մէջ:*

## Եւրոպական Խորհրդարանը Կոչ Ըրաւ Թուրքիոյ

*Շարունակուած էջ 1-էն*

*համահունչ, կը միանայ Հայոց ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցի առթիւ տեղի ունեցող ոգեկոչման արարողութեան եւ կոչ կ'ընէ Եւրամիութեան յանձնաժողովին ու Խորհուրդին միանալու ոգեկոչման», - ըսուած է բանաձեւին մէջ:*

*Եւրոպական Խորհրդարանը կը վերահաստատէ 1987 թուականի Յունիս 18-ին իր կողմէ ընդունուած բանաձեւը, ըստ որուն 1915-1917 թուականներուն Օսմանեան կայսրութեան մէջ հայերու հետ տեղի ունեցածը ճանչցուած էր ցեղասպանութիւն՝ ցեղասպանութեան մասին ՄԱԿ-ի 1948 թուականի ուխտի դրոյթներուն համապատասխան:*

*Փաստաթուղթը կ'առաջարկէ նաեւ սահմանել ցեղասպանութիւններու յիշատակման միջազգային օր:*

*Բանաձեւը նաեւ կ'ողջունէ Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Ռեճէփ Էրտողանի եւ վարչապետ Ահմեդ Դաւութօղլուի ցաւակցութիւնները եւ օսմանեան հայերու դէմ տեղի ունեցած դաժանութիւններու ընդունումը՝ որպէս ճիշդ ուղղութեամբ առնուած քայլ:*

*Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակը նկատելով կարեւոր հնարաւորութիւն՝ Եւրոպական Խորհրդարանը կոչ կ'ընէ Թուրքիոյ շարունակելու այդ ուղղութեամբ ջանքերը՝ ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը եւ այդպիսով ճանապարհ հարթել Թուրք եւ հայ ժողովուրդներու միջեւ իսկական հաշտեցման համար:*

*Եւրոպական Միութեան օրէնսդիր մարմինը նաեւ կոչ կ'ընէ Թուրքիոյ ու Հայաստանին շարունակել յարաբերութիւններու նորմալացման գործընթացը՝ առանց նախապայմաններու վաւերացնելով ու կեանքի կոչելով հաշտեցման արձանագրութիւնները եւ բանալ սահմանները:*

## Մամլոյ Հաղորդագրութիւն ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ

*Թէքէեան Մշակութային Միութեան Փասատինա Կլէնտէյլ Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպած է Դասախօսական երեկոյ մը որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 19, Ապրիլ 2015 երեկոյեան ժամը 5:00ին Միութեան Ալթատինայի Պէչկէօթիւրեան կեդրոնի սրահին մէջ:*

*Դասախօսութեան նիւթն է «Վահան Թէքէեան բանաստեղծն ու ազգային գործիչը, իր յետեղեռնեան տարիներու ամոքումի եւ ոգեվերածննդեան որոնումներուն մէջ», իսկ բանախօսն է յայտնի Թէքէեանագէտ բանաստեղծուհի՝ Դոկտ. Թամարա Յովհաննիսեան, որ յատուկ հրաւէրով պիտի գայ հիւսիսային Գալիֆորնիոյ Գարմէլ քաղաքէն:*

*Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Սալփի եւ Սօսի Քէօրքինեանները, երաժշտութեամբ եւ Հ.Բ.Ը. Միութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանի ուսանողները ասմունքով, ղեկավարութեամբ իրենց հայերէնի եւ երգեցողութեան ուսուցիչ Նորայր Տատուրեանի:*

*Սիրով հրաւիրուած է գաղութիս մշակութասէր հասարակութիւնը:*

*Հանդիսութեան աւարտին տեղի պիտի ունենայ պատշաճ հիւրասիրութիւն:*

### *ԹԱՄԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*

*Դոկտ. Թամարա Յովհաննիսեան ծնած է Երեւան, աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Կաճառը եւ ապա որպէս դասախօս աշխատած է ուսումնական բարձրագոյն հաստատութիւններու մէջ:*

*Մօտ երեք տասնամեակներ առաջ, Դոկտ. Յովհաննիսեան գաղթած է Միացեալ Նահանգներ եւ պաշտօնավարած Գալիֆորնիոյ Մոնթրէյ քաղաքի միջազգային յարաբերութիւններու հիմնարկութեան մէջ:*

*Վերջին տարիներու ընթացքին, ան բնակութիւն հաստատած է Գալիֆորնիոյ Գարմէլ քաղաքը, ուր ամուսնոյն հետ կը ղեկավարէ արուեստի գործերու երեք ցուցասրահներ: Դոկտ. Յովհաննիսեան հեղինակն է «Վահան Թէքէեանի Սիրերգութիւնը» հատորին, հրատարակուած Երեւան, ան հեղինակն է նաեւ բանաստեղծութիւններու երկու հատորներու, «Կինը» հրատարակուած 2006 թուականին եւ «Լինելիութեան Համանուագ» հրատարակուած 2013 թուականին:*



# ՀԱՅԵՐԸ ՊԷՏՔ Է «ԱՄՕԹԻ ՊԱՏ» ԿԱՌՈՒՑԵՆ՝ ԱՊՐԻԼ 24-ԻՆ ԿԱԼԻՖՈԼԻ ԳԱՑՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

Մինչ հայերը կը քննադատեն Թուրքիան՝ Ցեղասպանութեան ժխտման եւ մարդու իրաւունքներու այլ զանգուածային խախտումներու համար, նոյնքան կարեւոր է մեղադրել բոլոր ոչ թուրքերը, որոնք կը գործակցին Թուրքիոյ հետ, այդպիսով իսկ խրախուսելով թրքական իշխանութիւնները՝ շարունակելու իրենց անարգալից վարքագիծը:

Օրինակ, այս պահուն, բազմաթիւ պետութիւններու ղեկավարներ անամօթաբար կը պատրաստուին Ապրիլ 24-ին մեկնելու Կալիփոլի՝ տօնելու մէկ դարեայ թրքական յաղթանակը, շատ լաւ գիտնալով, որ պիտի մասնակցին կեղծ ամսաթիւով արարողութեան մը, որ նախատեսուած է Երեւանի մէջ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչումը խափանելու համար:

Հայ ժողովուրդը պէտք է «ամօթի պատ» կառուցէ եւ վրան արձանագրէ անունները աշխարհի բոլոր այն ղեկավարներուն, որոնք կը պատրաստուին Ապրիլ 24-ին Կալիփոլի երթալու… Իսկ ո՞վ է աւելի մեղաւոր: Նախագահ Էրտողա՞նը, որ երբեք խղճի խայթ չէ ունեցած մարդու իրաւունքներու խախտման համար, թէ՛ օտարերկրեայ պաշտօնեաները, որոնք պիտի մասնակցին անոր պատրաստած խեղկատակութեան:

Կը թուէր, թէ Էրտողանի դատապարտելի գործողութիւններէն ետք, ինչպէս՝ աջակցութիւնը «Իսլամական պետութեան», դրամի լուացումը, լրագրողներու բանտարկութիւնը, Պոլսոյ Կեզի զբօսայգիին մէջ խաղաղ ցուցարարներու վրայ կրակելու հրաման տալը եւ այլ բազմաթիւ խախտումներ, ան միջազգային հանրութեան կողմէն պիտի դիտուէր իբրեւ մերժելի եւ խորշելի անձնաւորութիւն…

Ցաւօք, կան օտարերկրեայ բազմաթիւ ղեկավարներ, որոնք ջերմ յարաբերութիւններ կը պահպանեն Թուրքիոյ հետ եւ պատրաստ են անկողին մտնել «սատանայ»-ի հետ՝ հետամուտ ըլլալով իրենց խեղաթիւրուած շահերուն: Թէեւ բազմաթիւ երկիրներ իրենց մեղքի բաժինը ունին, սակայն ամէնէն զարմանալին Իսրայէլի ղեկավարներու վարքագիծն է Թուրքիոյ հանդէպ՝ նկատի առնելով Էրտողանի հակասեմական թունաւոր յայտարարութիւններն ու հակախտրական գործողութիւնները… Այդուհանդերձ, հազիւ թէ Իսրայէլի համարձակ վարչապետ Պենճամին Նեթանեահուի կողմէ որեւէ քննադատական խօսք կը լսուի Թուրքիոյ ղեկավարին հասցէին: Պէտք չէ զարմանալ, եթէ Նեթանեահուն Կալիփոլի ուղարկէ Իսրայէլի բարձրաստիճան պաշտօնեայ մը…

Արդէն քանի մը տասնամեակ է, որ Իսրայէլի ղեկավարները կը հանդուրժեն թրքական լրատուամիջոցներուն մէջ առկայ ցեղապաշտական յայտարարութիւնները եւ նոյնիսկ կ՚աջակցին Հայոց ցեղասպանութեան հարցով Թուրքիոյ ժխտողականութեան՝ չուզելով թշնամանալ Թուրքիոյ հետ եւ վտանգել Պոլսոյ մէջ ապրող հրեաներուն կեանքը: Մեզի կ՚ըսէին, թէ Իսրայէլը ստիպուած էր հանդուրժել Թուրքիոյ անվայել պահուածքը, քանի որ անիկա թոյլ կու տար հրեաներուն Իրանէն փախչելու ժամանակ հատելու իր սահմանը, իսկ մէկ հրեայի կեանքի փրկութիւնը աւելի կարեւոր էր, քան՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը: Մինչեւ մէկ տասնամեակ առաջ Իսրայէլի իշխանութիւնները զգուշ էին որեւէ քայլի ձեռնարկելու առեն, որպէսզի չվնասեն Թուրքիոյ հետ իրենց երկրի ռազմավարական դաշինքին: Այժմ, երբ Թուրքիան դարձած է բացայայտ թշնամական երկիր, Իսրայէլի ղեկավարները ամբողջովին անտրամաբանական դիրքորոշում որդեգրած են՝ յանկարծ չընելու բան մը, որ աւելի պիտի վնասէ Թուրքիոյ հետ Իսրայէլի «փխրուն» յարաբերութիւններուն…

Անցեալ ամիս Լոս Անճելըսի «Ծըրուիչ ժուռնըլ»-ը Սիմոնէ Վիլսընը գործուղեց Թուրքիա՝ այնտեղ ապրող հրեաներու վիճակին մասին տեղեկագրելու համար: Ան երբեմնի ծաղկուն հրէական համայնքին մնացորդներուն վիճակը նկարագրեց իբրեւ անյոյս. «Հրեաները եւ միւս ազգային ու կրօնական փոքրամասնութիւնները շատ մեծ խտրականութեան կ՚ենթարկուին՝ գոյքային իրաւունքներու, լեզուի եւ կրթութեան ազատութեան, պաշտօններու բարձրացման եւ այլ առումներով»: Հրեայ բնակչութիւնը 500 հազարէն նուազած է մինչեւ 17 հազարի եւ կը շարունակէ նօսրանալ: 2003 թուականին մեծ թիւով հրեաներ հասկցան, որ այլեւս չեն կրնար մնալ Թուրքիոյ մէջ՝ Պոլսոյ «Նեւէ շալոմ» եւ «Պեթ Իսրայէլ» սինակոկներուն վրայ ահաբեկչական յարձակումներէն ետք, երբ սպաննուեցան 27 անձեր եւ վիրաւորուեցան հարիւրաւոր ուրիշներ: «Հանրային ոլորտին մէջ առկայ համատարած հակասեմականութիւնը եւս անժխտելի դեր խաղացած է հրեաներու արտագաղթին համար», կը հաղորդէ Ուիլսըն: «Ըստ Հակազրպարտչական լիկայի (ADL) հարցախոյզին, թուրքերուն գրեթէ 70 տոկոսը կը տածէ հակասեմական վերաբերմունք»:

Թուրքիոյ մէջ հրէական փոքրամասնութեան վիճակը օրէ օր աւելի անտանելի կը դառնայ: Անցեալ Սեպտեմբերին «Պոլսոյ կեդրոնը գտնուող բջիջային հեռախօսներու խանութի ցուցափեղկին վրայ գրուած էր. «Հրեայ չուներուն մուտքը արգիլուած է», կը նշէ Ուիլսըն: Տեղական հրէական թերթի խմբագիր Մոիս Կապայը գրած է. «Մենք ամէն օր կ՚ենթարկուինք սպառնալիքներու, յարձակումներու եւ հետապնդումներու»: Անցեալ Յուլիսին Էրտողան իր ծայրայեղ ատելութիւնը յայտնեց հրեաներուն հանդէպ՝ քարոզարշաւի ժամանակ թուրք հասարակութեան ըսելով. «Անոնք (հրեաները) օրն ի բուն կ՚անիծեն Հիթլերը, սակայն իրենց բարբարոսութեամբ գերազանցեցին Հիթլերը»: Անգարայի քաղաքապետ եւ Էրտողանի իշխող կուսակցութեան անդամ Մելիհ Կէօքչէքը գովաբանեց թուրք երգիչ մը, որ յայտարարած էր՝ «Թո՛ղ Աստուած օրհնէ Հիթլերը»: Յունուար 27-ին, Անգարայի մէջ Ողջակիզումի յիշատակութեան օրուան նուիրուած ձեռնարկին ընթացքին նշուեցաւ, որ խորհրդարանի նախագահ Ճեմիլ Չիչէքը ստացած է

Շար.ը էջ 18

# ԱՊՐԻԼ ԱՄԻՍԸ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՍԿԶԲՆԱԿԷՏ

Մեր ժողովուրդի ապրելու կամքին հետ զուգորդուած, միաւորուած ու մէկ դարձած Ապրիլ ամիսը սովորական ամիս մը չէ: Ցաւէն, տառապանքէն, մահէն, աքսորէն եւ Արեւմտահայաստանը կորսնցուցած մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն համար այս ամիսը խորհրդանիշն է, ոչ միայն կեանքը շարունակելու մեր կամքին այլ նաեւ Հայոց Դատին պահանջատիրութեան համար նոր ելքեր որոնելու տեսակէտէն:

Մեր էութեան, մեր արմատներուն, մեր օրհասին ու դաւանանքին մէջ շաղախուած արեան ամէն կաթիլի մէջ բողոքի ճիչը կայ:

Աքսորէն ու տառապանքէն անդին: Արեւմտահայոց շէները եւ գաւառները բռնի ուժով ու անմարդկային բոլոր միջոցներու ճնշման տակ լքելէ անդին:

Տէր Զօրի, Մարկատէի, Շատատէի եւ այլ անապատային վայրերուն մէջ արեան հեղումը, ծարաւը, սովի բոլոր տեսակները ապրելէ անդին:

Սփիւռքի տարբեր երկինքներու տակ հարուած ստացած, բայց չմեռած մեր ցեղի հունտին ծաղկումէն անդին:

Մեզմէ իւրաքանչիւրիս մէջ բողոքի այդ ճիչը կայ:

Բողոքը, պայքարելու ընթացքը, ցեղասպանութեան զոհերուն յիշատակումը աւելի վաւերական կը դառնան, երբ մեր ժողովուրդի բոլոր բաղկացուցիչ տարրերը ի մի կը խմբուին պահանջատիրական-իրաւական գործընթացի մը շուրջ:

Հայ դատի ամէնէն հիմնական, ամէնէն էական, ամենէն կարեւոր հիմքը Հայաստան երկիրն է իր ամբողջութեամբ, իր պետականութեամբ եւ իր բանակով:

Հայ Դատի աշխատանքները կը սկսին այս հողակտորէն իբրեւ պսակումի արդէն հարիւր տարեկան դարձած հրաշալի յարութեան մը:

Իրօք մեր ժողովուրդի գոյատեւումը, անոր մաքառումը, անոր ոգեղէն խարիսխներու վրայ նետուած արժէհամակարգը այսօր աւելի քան որեւէ ժամանակ նոր հուն պիտի մտնեն:

Մենք բոլորս միասին այդ հունին առջեւ ճանապարհ բացողները պիտի ըլլանք:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը եւս իր կարելի բոլոր միջոցներով պիտի մասնակցի այդ սրբազան գործին:

Մեր կուսակցութեան համար Հայ Դատի ըմբռնումը նուիրական է: Այդ նուիրականացման ճամբուն վրայ մենք յանձն առած ենք բազում զոհողութիւններ եւ այսօր եւս պատրաստ ենք նոյն ճանապարհէն քալելու:

Մեր գոյութեան իմաստը, մէկ ըլլալու գաղափարը եւ ազգային միասնականութեան ատաղձը կեցուածքներով պիտի ամրապնդուին:

Այդ բոլորը խօսքի սահմաններէն անդին են: Հայ Դատի առանցքային այս ժամանակշրջանին բոլորս պարտաւոր ենք մէկ դրօշի տակ քալել եւ այդ դրօշը Հայաստանի անվտանգութեան դրօշն է: Այդ դրօշին տակ է նաեւ, որ երեւելի պիտի դառնան Արցախեան աշխարհի ամրապնդումը եւ արեւմտահայոց իղձերու իրականացման գործընթացին սկիզբը:

Նոր հանգրուանի սեմին ենք, ու այդ հանգրուանը գերազանցապէս պիտի ըլլայ Հայ Դատին նոր հանգրուանը:

Ամրապնդուած, միասնական եւ թելադրական հանգրուան: Ու այս առումով է, որ պիտի յայտարարենք, թէ Ապրիլ ամիսը գերազանցնապէս Հայ Դատի ամբողջական ընթացքին համար կարեւոր եւ անկիւնադարձային ամիս է:

Արժանին ընենք մեր սրբազան Դատին համար: Իբրեւ Հնչակեաններ արժանին մատուցենք մեր սրբազան Դատին:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»




Massis Weekly

Volume 35, No. 14 Saturday, April 18, 2015

# Pope Francis Commemorates Armenian Genocide Centennial Calls it "First Genocide of the 20th Century"



VATICAN CITY (RFE/RL) — Pope Francis has used the word "genocide" to describe mass killing of Armenians under Ottoman rule in WW1 100 years ago, at a Vatican church service.

Pope Francis remembered the victims of "that immense and senseless slaughter" at the start of the Mass at St. Peter's basilica, which was attended by President Serzh Sarkisian, the supreme heads of the Armenian Apostolic Churches and hundreds of Armenian Catholics.

"It is necessary, and indeed a duty, to honor their memory, for whenever memory fades, it means that evil allows wounds to fester. Concealing or denying evil is like allowing a wound to keep bleeding without bandaging it," he declared.

The pontiff spoke of "three massive and unprecedented tragedies" of the past century. "The first, which is widely considered the first genocide of the twentieth century, struck your own Armenian people, the first Christian nation, as well as Catholic and Orthodox Syrians, Assyrians, Chaldeans and Greeks," he said.

"Bishops and priests, religious, women and men, the elderly and even defenseless children and the infirm were murdered. The remaining two were perpetrated by Nazism and Stalinism."

Humanity, he went on, did not learn lessons from those tragedies as evidenced by the mass killings in Cambodia, Rwanda, Burundi and Bosnia later in the 20th century. "Sadly, today too we hear the muffled and forgotten cry of so many of our defenseless brothers and sisters who, on account of their faith in Christ or their ethnic origin, are publicly and ruthlessly put to death … or forced to leave their homeland," he said in a clear reference to the beleaguered Christian communities in Iraq and Syria.

Pope Francis's characterization of the 1915 mass killings and deportations of Armenians was in tune with his views on the subject repeatedly voiced in the past. He publicly called them "the first genocide of the 20th century" in 2013 just a few months after becoming supreme head of the Roman Catholic Church.

The two-hour Mass was concelebrated by Armenian Catholic Patriarch Nerses Bedros XIX and featured medieval Armenian religious hymns performed by two choirs from

Continued on page 4

# Davutoglu: Pope Francis Part of 'Evil Front' Against Turkey

ISTANBUL — Pope Francis's reference to the 1915 Armenian massacres in the Ottoman Empire as "the first genocide of the 20th century" was part of an international conspiracy against Turkey's government, Prime Minister Ahmet Davutoglu claimed on Wednesday.

"Currently, an evil front is being formed against us. Now the pope has joined this conspiracy," "Hurriyet Daily News" quoted him as telling members of the ruling AKP party who will run in Turkey's general elections slated for June 7.

Davutoglu said the anti-AKP "front" consists of not only external powers but also Turkey's two main opposition parties .

"We are ready to discuss historical issues, but we will not let people insult our nation through history," said Davutoglu.

Erdogan similarly condemned the pontiff on Tuesday, warning him to not repeat the "mistake."

In his statement, Erdogan said,

Continued on page 4

# European Parliament Adopts Resolution Urging Turkey to Recognize Armenian Genocide



**Members of the European Parliament observe a minute of silence as they commemorate the 100th anniversary of Armenian Genocide**

BRUSSELS -- The European Parliament on April 15 overwhelmingly passed a Resolution on the Armenian Genocide centennial.

The resolution, supported by all main political groups, says the European Parliament "joins the commemoration of the centenary of the Armenian Genocide in a spirit of European solidarity and justice."

It also says Ankara should open its archives and "come to terms with its past, to recognize the Armenian genocide," and pave the way for a genuine reconciliation between Turkish and Armenian peoples. It also urges Turkey to "normalize relations with Armenia".

The Resolution also commended the statement by Pope Francis on 12 April honoring the centenary of the genocide

Turkey was quick to dismiss the resolution even before the vote, with President Recep Tayyip Erdogan saying on April 15 that "whatever decision the European Parliament takes on Armenian genocide claims, it would go in one ear and out the other."

Erdogan said it was "out of the question for there to be a stain, a shadow called 'genocide' on Turkey.

# Los Angeles Prayer Service Commemorates Armenian Genocide

## LA Mayor Eric Garcetti Delivers Keynote Address



LOS ANGELES -- A historic ecumenical gathering was held at the Cathedral of Our Lady of the Angels on Tuesday, April 14, 2015. The service was hosted by the Most Reverend José H. Gomez, the Archbishop of the Roman Catholic Archdiocese of Los Angeles.

The evening's keynote message was delivered by LA Mayor Eric Garcetti, who courageously reaffirmed the importance of recognizing the Armenian Genocide. "Today, in solidarity with the people of Armenia and the Armenian Diaspora, we speak of a Genocide" said Mayor Garcetti. "We heard what Pope Francis said and the courage that he had. But it shouldn't take courage to speak the truth," he continued.

"In Los Angeles we can speak the truth that a genocide occurred...that 1.5 million souls were erased from this earth...that we have a responsibility to make sure that everybody on this earth recognizes it. As Mayor of the Great City of Los Angeles, I will always stand with the Armenian people and I

Continued on page 3

## Armenia Rejects Cooperation with Pro-Azeri PACE Rapporteur on Karabakh



**ACE president Anne Brasseur meeting in Armenia**

YEREVAN (RFE/RL) -- Armenian lawmakers insisted on Monday that they will not cooperate with a pro-Azerbaijani British colleague who has been tasked by the Council of Europe's Parliamentary Assembly (PACE) with drafting a report on the Nagorno-Karabakh conflict.

The rapporteur, Robert Walter, was named by the PACE leadership last year to launch a fact-finding mission to the conflict zone and prepare the report titled "Escalation of Violence in Nagorno-Karabakh and Other Occupied Territories of Azerbaijan."

This wording prompted furious protests from Armenian members of the Strasbourg-based assembly and the government in Yerevan. They say that it predetermines Walter's findings and runs counter to statements made by U.S., Russian and French mediators trying to broker a Karabakh settlement.

The Armenian side has also accused Walter of having close with Azerbaijan's government, saying that the British parliamentarian has repeatedly defended Baku's dismal human rights record criticized by Western human rights groups.

Walter led a team of PACE members that observed Azerbaijan's last presidential election held in 2013. Unlike other Western observers who reported widespread electoral fraud, the PACE mission concluded that the vote met democratic standards.

Walter visited Baku in March and hopes to travel to Armenia and Karabakh later this year. The head of the Armenian delegation at the PACE, Hermine Naghdalian made clear last month that although officials in Yerevan may agree to receive him they will avoid discussing the Karabakh conflict.

Nagorno-Karabakh's leadership has gone further, saying that Walter is not welcome in Stepanakert. "If Walter considers Karabakh a part of Azerbaijan then he should come to Karabakh from there," Davit Babayan, a senior Karabakh Armenian official said recently.

Anne Brasseur, the PACE president, urged the Armenian side to "actively participate" in the drafting of Walter's report when she began a visit to Yerevan on Monday. Speaking after meetings with Armenian members of the PACE, Brasseur said their involvement would ensure that the document will be a "balanced" one.

The Armenian parliamentarians remained adamant, however. "I and other members of the Armenian delegation told Ms. Brasseur that we are not going to cooperate with Azerbaijani lobbyist Bob Walter in drafting such a biased report," said one of them, Naira Zohrabian. "We know very well that the report has long been drawn up and that Bob Walter will only sign it."

Levon Zurabian, another member of the Armenian delegation in Strasbourg, agreed. "By referring to Nagorno-Karabakh as a part of Azerbaijan, the PACE engages in an unacceptable interference in the course of negotiations," he said. "That would only undermine the shaky peace process."

## IMF Expects Recession In Armenia

The Armenian economy will likely contract by 1 percent this year due to spillover effects of Russia's economic troubles, the International Monetary Fund has said in a sharp downward revision of its growth projections for Armenia.

"Armenia and Belarus are projected to enter into recession in 2015, and Georgia's growth will slow. In all three economies, the downward turns reflect spillovers from Russia," the IMF said in its latest World Economic Outlook released late on Tuesday.

Mark Horton, the head of an IMF mission visiting Yerevan likewise predicted last week that economic growth in Armenia will be "close to zero" in 2015. He too cited the fallout from the recession in Russia, the South Caucasus state's leading trading partner and the main source of multimillion-dollar remittances.

Both the IMF and the World Bank forecast a 2015 growth rate of 3.5 percent as recently as last fall. The bank cut its outlook late last month, saying that Armenia's Gross Domestic Product will at best increase by 0.8 percent in real terms.

The Armenian government recorded a GDP increase of 3.4 percent in 2014 and expected faster growth this year. The slowing growth is putting at risk its tax revenue and spending targets.

Apparently anticipating the downturn, the government sold about $500 million in dollar bonds in international

**Continued on page 3**

## Azerbaijan Blacklists NYT Journalist for Visiting Nagorno Karabakh

BAKU — New-York Times journalist Seth Kugel has been included in the list of undesirable persons of the Azerbaijani Foreign Ministry for visiting Nagorno Karabakh, spokesman for the Azerbaijani foreign ministry Hikmet Hajiyev told Trend news agency.



Seth Kugel of the New York Times traveled to Armenia and Nagorno Karabakh and wrote down the impressions in an extended article titled "A warm welcome in the Caucasus mountains."

Azerbaijan calls the article "biased" and claims it distorted facts.

The article by Seth Kugel tells about the lifestyle of the Artsakh people after the war in the Nagorno Karabakh, stressing that notwithstanding the fact that the Artsakh Republic has not yet been recognized internationally, but it has a great tourism potential and is considered to be a secure place for tourists.

## Yerevan Urged To Evacuate Aleppo Armenians



YEREVAN (RFE/RL) -- Syrian-Armenians remaining in Aleppo are calling on Armenia to help evacuate them from the war-ravaged city where deadly fighting between Syrian government troops and opposition fighters intensified in recent days.

Opposition forces reportedly shelled late last week Aleppo's western Suleymaniya district mostly populated by Armenians and other Christians. News reports from Syria spoke of severe devastation and heavy casualties among civilians caused by shells and rockets.

The fighting made life even more unbearable for thousands of Syrian Armenians remaining in what has for decades been the center of their once prosperous community in the Middle Eastern state. A growing number of them now seem desperate to take refuge in Armenia or other countries. Some have appealed to the authorities in Yerevan directly or through their relatives living outside the war zone.

"We are only asking the Armenian government to help transport us to Yerevan," said Hranush Arakelian, a middle-aged Armenian woman trapped in Aleppo with one of her daughters and three other family members, including a toddler.

"We came under heavy fire the day before yesterday," Arakelian said in a phone conversation with her second daughter living in Yerevan. "The Christian district was shelled and all people went underground. They are now pulling dead and injured people out of the rubble.

"There are no Armenians among the dead. But quite a few of them were wounded," she added.

"They just can't stay there anymore," the Yerevan-based daughter, Narine Sarkisian, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am.) "Only God knows how they survived this winter."

Arakelian said that both her family and many other Aleppo Armenians want to flee the besieged city but have no money to pay for a journey to safer parts of Syria under government control.

"Many people would like to get out but they have no money for doing that," confirmed Nazik Tatoyan, another Armenian woman from Aleppo, who took refuge in Armenia together with her family last year. She said the family had to sell its car to flee the city.

Responding to the appeals, a senior official at the Diaspora Ministry in Yerevan dealing with Syrian Armenian refugees said Armenia's government cannot move to evacuate people from Aleppo en masse without a decision officially made by community leaders in Syria.

"The wishes of several individuals are not enough," Firdus Zakarian told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "We need a decision by the majority [of community members.]"

Zakarian revealed at the same time that Prime Minister Hovik Abrahamian has instructed the government to prepare for the evacuation of Armenian children from Aleppo. But he did not go into details.

## April 24 Istanbul and Diyarbakir Commemoration Programs Announced



ISTANBUL (Agos) — The 100th Anniversary End to Denial Initiative has announced its Genocide Commemoration Program for Istanbul and Diyarbakir.

The initiative bringing together Anadolu Kültür ve Arastirma Dernegi/Anatolian Culture and Research Association (AKA-DER), the Human Rights Association Anti-Racism and Anti-Discrimination Commission, Nor Zartonk, Platform Turabdin: The Platform of Turkey's Assyrians, Yüzlesme Platformu (the Facing the Past Platform) and the Zan Social Political Economic Research Foundation, and supported by the London-based Gomidas Institute, the Armenian Council of Europe and Collectif VAN from Paris, held a press conference regarding commemoration events to be held on April 24.

Human Rights Association (IHD) Istanbul Branch Director Eren Keskin read out the press release on behalf of the initiative, and said that the struggle for the recognition of Genocide and against denial would end neither on 24 April 2015 or on 31 December 2015. Keskin added: "As long as the State of the Republic of Turkey, and the majority of society in Turkey that has been nurtured on official ideology do not accept the crime and take steps for the reparation of losses that are in fact irrevocable and irreplacable, we will continue our search for justice for the Genocide victims of Asia Minor, and the generations that have been dispersed across all corners of the world, or continue to live under genocidal conditions because of denial."

The initiative said that the concrete demand on April 24 would be "recognize the Genocide, issue an apology, provide remedy and reparation". The initiative will gather at the Turkish and Islamic Arts Museum, formerly the prison where the Armenian intellectuals were imprisoned 100 years ago, from which they will go on to the Haydarpasa Railway Station, their departure point before exile.

Following the commemoration, the grave of Sevag Balikçi, who was murdered while he was fulfilling his military service, will be visited at the Sisli Armenian Cemetery; and in the evening a march will be held to Taksim for the evening commemoration.

**Beyazit Square commemoration**

The Armenian Council of Europe, that will come to Istanbul as a guest of the Human Rights Association Anti-Racism and Anti-Discrimination Commission will hold a commemoration at Beyazit Square, at 10 am, on April 24. Known as "the 20 Hunchakian gallows", the 20 Hunchakian leaders and party members who were hanged in the Square on 15 June 1915 will be commemorated with the attendance of members of the Human Rights Association Anti-Racism and Anti-Discrimination Commission.

**Armenian and Assyrian victims to be commemorated in Diyarbakir**

On the same day, the Armenian and Assyrian victims of the Genocide will be commemorated in Diyarbakir at the ruins of the Surp Sarkis Church with the attendance of the children and grandchildren of the victims. In the afternoon, a commemoration event with broad participation is planned with the support of the Human Rights Association, the Diyarbakir Bar Association, the Zan Foundation, the Diyarbakir Metropolitan Municipality, and the Sur Municipality and speeches by Kurdish, Armenian and Assyrian attendees. In the evening, a press conference will be held with the participation of representatives of supporting organizations.

## Los Angeles Prayer Service Commemorates Armenian Genocide

**Continued from page 1**

will always stand for truth. It is a genocide and in Los Angeles, we accept that and we move forward with the responsibility to make sure that every lie is answered with the truth."

In his speech, Mayor Garcetti reflected on the impact of the Armenian Genocide on the international level. "A hundred years ago, while slaughter happened in Anatolia, where we lost soul after soul, after soul, it did not go unnoticed. The New York Times ran 145 stories on the race extermination of the Armenians. The coverage was so prolific that it led Herbert Hoover to state probably Armenia was known to the American school child only a little less than England."

More than 150 religious leaders joined civic officials and over three thousand faithful in honoring the memory of the 1.5 million Armenian martyrs who perished during the Armenian Genocide of 1915.

## Istanbul Exhibition: Without Knowing Where we are Headed…



**This is a segment from a collection of portraits by artist Nalan Yirtmaç of 100 Ottoman Armenian intellectuals who were arrested and taken to concentration camps on April 24, 1915, created for the exhibition "Without knowing where we are headed…"**

ISTANBUL — A new exhibition at the Depo art and culture center in Istanbul by artists Nalan Yirtmaç and Anti-Pop points a finger at the brutality experienced by Armenian people living in the Ottoman Empire and in Turkey, Today's Zaman reports.

On display since April 4 on the first floor of Depo in the Tophane neighborhood, "Without knowing where we are headed…" invites the audience to reflect on both the past and the present day.

The exhibition is made up of portraits of 100 Armenian intellectuals who were among the more than 200 significant figures from the Armenian community who were arrested on April 24, 1915, upon the order of Talat Pasha, the interior minister of the time.

**********

"Last week, from among us, Agnuni, Khajag, Zartaryan, Cangülyan, Dagavaryan and Sarkis Minasyan were summoned by Ankara and they set on the road. We do not know their whereabouts now. I grieve, because although we suffered so much hardship under the Autocracy regime, we are still being unjustly persecuted in this era of Freedom and Constitutionalism also. Was this the fortune to befall those who suffered and toiled for the sake of the motherland all those years!"

**From Simpad Pürad's letter dated May 30, 1915 written from the prison of Ayas**

**********

"It may be that one day we would be forced to go, but… We would set out just like those in 1915 did… Like our forefathers… Without knowing where we were headed… Walking on the roads they trod… Feeling the torment, living the pain…"

**From Hrant Dink's article "Like a nervous pigeon: my unsettled state of mind"**

**********

These intellectuals, most of whom were arrested on April 24, 1915 in Istanbul one day before the Allied landings in Çanakkale (Gallipoli), were taken to two concentration camps in Çankiri and Ayas, near Ankara. Most of them were slain by band members set loose from prisons. These arrests constitute the first step of the Committee of Union and Progress government's decision of deportation which soon evolves into a genocide. Following the arrest of approximately 250 people on the night of the 23rd leading up to the 24th, a massive police operation is set underway which targets 2500 people over the course of a couple of days.

The work comprised of portraits of Armenian intellectuals arrested, exiled and killed on April 24 and in its aftermath was created by artist Nalan Yirtmaç. This work pulls them out from under the generic heading of "arrested and cast out Armenians" and turns them into people with familiar names and faces; the active participants of the cosmopolitan Ottoman intellectual milieu. These portraits the artist has produced in her own pictorial language based on photographs from the few publications that have survived to the present day summon a past that is scarcely known by some and completely ignored by others back to collective memory.

The work created by Anti-Pop immediately after the assassination of Hrant Dink on January 19, 2007 is exhibited together with these portraits, drawing attention to the agonizing continuity between 1915 and the massacre of Hrant. On one hand are the intellectuals arrested and killed a hundred years ago, and on the other a revolutionary who paid with his life only a few years ago for believing that Turks and Armenians will reconstruct their own identities on healthy grounds and live in equality and freedom.

To come to terms with the great catastrophe experienced in the Ottoman state and Turkey, to bow our heads and mourn together…

**DEPO culture and debate center**

## IMF Expects Recession In Armenia

**Continued from page 2**

markets late last month. It is due to spend $83 million of the Eurobond proceeds on covering the 2015 state deficit projected at roughly $250 million. Another $200 million is to be channeled into a government "stabilization fund" for special budgetary expenditures.

The IMF expects the Russian economy to shrink by 3.8 percent this year and another 1.1 percent in 2016 mainly because of recent months' sharp fall in oil prices.

The Russian recession has already dramatically slashed the dollar value of remittances from scores of Armenia migrant workers in Russia.

# SD Hunchakian Party Representative Addresses Ararat Home Board of Trustees



**Harry Sarafian joins Ararat Home Trustees at their monthly dinner meeting From left to right: Ron Nazeley, Dr. Roy Martinian, Shahe Boyadjian, Joseph Kanimian, Dr. Sarafian, Peter Darakjian, Armen Hampar**

MISSION HILLS, CA - Continuing its efforts of forging closer bonds with leading organizations in the Armenian community, the Ararat Home Board of Trustees was pleased to invite the Secretary of the Central Committee of the Social Democratic Hunchakian Party (SDHP), Dr. Harry Sarafian, to its regular monthly dinner and meeting on March 25, 2015. Ararat Home Board Chairman Joseph Kanimian, Esq. introduced Dr. Sarafian and noted that this was the third in a series of such meetings.

Dr. Sarafian thanked the Board for its warm welcome. He presented the history of the SDHP from its establishment to its social activism to its current work and presence in multiple countries on six continents. He explained that the party is encouraged that the ideals of its founders are now being independently pursued by activist Turks in Turkey. He spoke of the challenges the party faces in the political sphere of Armenia today as well as in the Diaspora and the opportunities it shares with other political parties in assisting Armenians in the Middle East, especially Syria, in helping the development of Armenia and Artsakh, gaining recognition of the Armenian Genocide, and in strengthening the connection between the Diaspora and the homeland, particularly for Armenian youth.

Dr. Sarafian expressed appreciation and support of Ararat Home's long-standing mission and work in preserving Armenian culture and heritage and caring for Armenian elderly. On behalf of the Board of Trustees, Mr. Kanimian presented Dr. Sarafian several Ararat Home memorabilia and thanked the SDHP for its support and media coverage of the Home's activities.

# Genocide Studies International New Issue Dedicated to Centenary of the Armenian, Assyrian and Greek Genocides




TORONTO -- The International Institute for Genocide and Human Rights Studies (A Division of the Zoryan Institute) is pleased to announce the release of Genocide Studies International Volume 9, number 1, Spring 2015. The new issue is dedicated to the Ottoman Genocides of the Armenian, Assyrian, and Greek peoples, marking the upcoming 100th anniversary of the Armenian Genocide in April 2015.

This peer-reviewed journal was edited by Roger W. Smith. The new issue includes six articles:

- "Introduction: Ottoman Genocides of Armenians, Assyrians, and Greeks," by Roger W. Smith
- "Contending Interpretations Concerning the Armenian Genocide: Continuity and Conspiracy, Discontinuity and Cumulative Radicalization," by Robert Melson
- "The Genocide against the Ottoman Armenians: German Diplomatic Correspondence and Eyewitness Testimonies," by Tessa Hofmann
- "Academic Denial of the Armenian Genocide in American Scholarship: Denialism as Manufactured Controversy," by Marc. A. Mamigonian
- "The Complexity of the Assyrian Genocide," by David Gaunt
- "The Genocide of the Greeks of the Ottoman Empire, 1913-1923: A Comprehensive Overview," by Vasileios Th. Meichanetsidis.

Prof. Smith's article introduces the themes addressed in this special issue of GSI and emphasizes how careful consideration of the Ottoman genocides deepens our understanding of what genocide is and how it can be enacted.

Prof. Melson's article examines the relationship between the Armenian massacres of 1894-1896 and on the process that initiated the Genocide during and following WWI. One group of historians argue that the Genocide was a continuation of the 1894-1896 massacres and that its origins were rooted in Islam and Ottoman culture, whereas a second group of scholars contend that the Genocide was qualitatively different from the massacres and that it was driven by a policy of radicalization during WWI. The article concludes with an evaluation of some of the assumptions of the second view.

Hofmann's article documents and analyses the genocide of the 1.5 million Armenians in the Ottoman Empire during 1915 and 1916 and is based mainly on the German diplomatic correspondence of the time, which is preserved at the Political Archives of the German Foreign Office, in Berlin. A special subsection of the article is dedicated to the clandestine intelligence organization, Teskilat-i Mahsusa (Special Organization), which planned, implemented and largely conducted the destruction of the Armenians. Germany's involvement in the destruction of Ottoman Armenians, Aramaic-speaking Christians, and Greek-Orthodox Christians is also examined.

Mamigonian's article traces the early development of Armenian Genocide denial and focuses on the more recent refinements and the penetration of denial into mainstream American academia, posing as a legitimate intellectual position within a historical debate.

Prof. Gaunt's article focuses on another group targeted by the Ottoman Empire for extermination: the Assyrians. The Assyrian Genocide involved many non-Armenian Christian groups native to eastern Anatolia and northern Mesopotamia. Among them were the Assyrian Church of the East, the Chaldean Church, the Syriac Orthodox, and some smaller sects.

Meichanetsidis' article refers to the 1913-1923 Genocide of the Greeks of the Ottoman Empire and provides a comprehensive overview of the overall genocidal process. The article aims at providing an understanding of the Genocide and a sense of the Ottoman projects of destruction that included Armenians, Assyrians/Arameans and Greeks in an attempt at a total restricting of Ottoman society and the creation of a Turkish Muslim national state.

Also included is a book review: The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire by Taner Ak?am, reviewed by Dr. Rouben Paul Adalian, Director of the Armenian National Institute.

For information on subscribing to the journal, or to purchase single copies, please visit http://www.utpjournals.com/Genocide-Studies-International.html or contact the International Institute for Genocide and Human Rights Studies (A Division of the Zoryan Institute) at admin@genocidestudies.org or by telephone 416-250-9807.

# Pope Francis Commemorates Armenian Genocide

**Continued from page 1**

Gyumri. Underlining its ecumenical spirit, Catholicos Karegin II, Catholicos Aram I and over a dozen bishops of the Armenian Apostolic Church sat in a place of honor in the basilica along with President Sarkisian.

In another unprecedented development, Catholicos Karegin II and Catholicos Aram I embraced Pope Francis at the altar and delivered sermons at the end of the ceremony broadcast live to Armenia.

"Our ancient people were uprooted from their cradle and historic homeland and scattered around the world," Catholicos Karegin II said in reference to the Armenian genocide. "Our centuries-old Christian heritage was torn down, destroyed and seized."

"However, nothing — neither suffering, nor persecution or even death — forced our people to renounce their sacred faith," he added.

Both Armenian Church leaders expressed their "deep gratitude" to the Roman Catholic Church for its attempts to stop the genocide and support its survivors. They specifically paid tribute to Pope Benedict XV who protested to Ottoman Sultan Mehmed V against the massacres.

"We will never forget the continuous concern, assistance and solidarity of the Church of Rome towards Armenians — that is to say towards justice," said Catholicos Aram I.

Pope Francis also honored Armenia and its worldwide Diaspora by bestowing the title of "Doctor of the Universal Church" on St. Gregory of Narek, a 10-11th century Armenian cleric renowned for his religious writings. Only 35 Christian figures have received the Catholic title to date. A large picture of Gregory was put on display during Sunday's Mass.

# Pope Francis Part of 'Evil Front' Against Turkey

**Continued from page 1**

"I saw a different politician during our meetings. I am not saying religious figure, I saw a different politician. But after these statements, I unfortunately saw the difference in both his political identity, and his stance as religious figure, entirely as the manifestation of a very, very different mentality, of a perception that throughout history has caused the slaughter of millions of people".

Pope Francis defended his stance the day after the landmark liturgy in St. Peter's basilica attended by Armenia's top political religious leaders. Speaking at a morning Mass, he said the Catholic Church is right to spread a "message of frankness and Christian courage" around the world.

"We cannot keep silent [about] what we have seen and heard," Francis said, according to Radio Vatican. He cited the examples of the apostles Peter and John, who he said defied threats to their life to preach the truth.

# ՀՐԱՇԱԼԻ ՀԱՅ ՄԱՐԴԸ ԱՆՄՈՌԱՑ ՍԻՄՈՆԸ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*



*Մարդկային կեանքը ծնունդից մինչեւ մահ լի է անակնկալներով, ծովի նման ելեւէջներով մերթ թուխպ, մերթ ջինջ կապուտակ, կարելի է ասել որ մարդու կեանքը ինքնաարարում է՝ տնօրինող ու դասաւորող: Մարդ կայ դառնում է շրջապատի սիրելի անձը, անշուշտ արժանիքներով, խոհուն ու խոկուն մտածելակերպով, արարարքներով, նուիրուածութեամբ եւ ծառայութեամբ, այսպիսով նա իմաստաւորում է իր կեանքը ճանաչողաց սրտերում սիրոյ եւ յարգանքի տեղ բացելով՝ պայծառ եւ արեւոտ սերմեր ցանելով: Չեմ չափազանցում եթէ ասեմ այսպէս օրինակ մէկն էր մեր Սիմոնը ազգային եւ մարդկային արժէքների նկատմամբ բծախնդիր: Նա միջակ հասակով, խոշոր սեւաթոյր աչքերով, բարեկիրթ վարք ու բարքով, յեղափոխական միրուքով, ազնիւ ու համեստ խառնուածքով ներկայանալի անձնաւորութիւն էր:*

*Սիմոնի հետ իմ ծանօթութիւնը եւ ընկերութիւնը սկսում է 1984 թուականից «Ապագայ» պարբերաթերթի հրատարակման օրից ի վեր 30 տարի անընդմէջ ջերմ ու սիրալի, առողջ ու շինիչ հիմքերի վրայ: Թերթի հրատարակումը խմբական աշխատանք էր, որպէս խմբագրական կազմ ընդգրկուած էին՝ նուաստս, Սիմոնը, դոկտ. Ռուբիկ Սարդարեանը, Վահիկ Շահմուրադեանը, Էդիկ Խաչատրեանը, Նորիկ եւ Հրայր Մովսիսեանները՝ Էդիկ Բաղդասարեանի խմբագրութեամբ: Այնուհետեւ մեր տեղեկագրական աշխատանքները շարունակուեցին այլ անուն թերթերով՝ սահմանափակ անձերով: «Տեղեկատու»-ի հրատարակման իրենց համագործակցութիւնը բերին՝ Սուրէն եւ Անուշ Համբարչեանը:*

*Սիմոնը սերած է արեւմտահայ ընտանիքից, Նրա պապը Ջարդից մազապուրծ հաստատւում է Ատրպատականում՝ Իրան: Նա ծնուել է Ապրիլի 14, 1946-ին նոյն քաղաքում, սակայն հինգ տարեկան Սիմոնը ընտանիքով տեղափոխւում են Թեհրան: Նա հայոց ազգային՝ «Քուչէշ-Դաւթեան» միջնակարգ դպրոցի շրջանաւարտ է եղել, հետեւում է բարձրագոյն ուսմանց արժանանալով աւարտական վկայականների՝ արդիւնաբերական, կառավարման եւ ընդհանուր հաշուառում ճիւղերում, նա փնտրուող հաշուապահ եւ ծրագրաւորող էր: Սիմոնը տարիներ զբաղուել է գեղանկարչութեամբ, գրաֆիկով ու գեղագրութիւնով: Գեղեցիկ ձեռագիր գրութիւնները եւ նկարները տեսողաց գնահատանքին էր արժանանում, Նրա գործերից ոմանք դարձել են Ապրիլեան որմազդեր: Նա լաւապէս տիրապետում էր հայերէն, պարսկերէն եւ անգլերէն լեզուներին, օժտուած էր թարգմանութիւններ կատարելու եւ թարգմանիչի ընդունակութիւններով:*

*Սիմոն Խաչատրեանը անդամակցում էր Իրանի Որակաւորուած Հաշուապահների Ինստիտուտին, Իրանի Կառավարման եւ Տնտեսագէտների Ասոցիացիաներին, Ամերիկայի Հաշուապահների Ազգային Հասարակութեանը: Նա խորապէս ազգասէր եւ հայրենասէր լինելով անդամակցում էր հայկական ժողովրդային շարժման, նաեւ վերջին քանի տարիները Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Իրանի մասնաճիւղին որպէս վարչական:*

*Սիմոնի ազգային-հասարակական ծառայութիւնները սկսում է դպրոցական շրջանից: Նա ընդունակ աշակերտ էր եւ շատ կարեւորութեամբ հետեւում էր հայոց լեզուի դասերին, վայ որ հայերէնի դասաժամերին աշակերտներից մէկը խանգարէր կամ նեղացնէր հայոց լեզուի ուսուցչին, նա բողբոքւում եւ սպառնում էր պաշտպան կանգնելով ուսուցչին: Սիմոնը խոր գիտակցութեամբ հանդէպ մեր ազգային արժէքներին՝ պայքարով լցուած էր մեր ժողովրդի ջարդարարների եւ հայրենիքի բռնագրաւման թշնամիների դէմ, զաւակ ունեցած վիճակում նա որպէս Գաղտնի Բանակի հետեւորդ երկու տարուայ ազատազրկման է դատապարտւում Իրանում: Նա մինչեւ իր անակնկալ մահուան օրը մնաց հաւատարիմ իր գաղափարներին՝ սիրել ազգը, հայրենիքը, պահել ու պաշտպանել մեր արժէքները եւ պայքարել հայ ժողովրդի արդար իրաւունքների վերատիրութեան համար: Նա խիստ դժգոհում եւ տխրում էր տեսնելով հայրենիքից արտագաղթը եւ քննադատում էր իշխանաւորների քաղաքականութիւնը:*

*Սիմոնը ամուսնացած էր Ռիմայի հետ եւ բախտաւորուած էր երկու զաւակներով՝ Ալենուշ եւ Մարտիկ: Սիմոնը շատ գոհ էր իր ամուսնութիւնից, Ռիման մնաց նրա հաւատարիմ կողակից ընկերը փոխադարձ նուիրուածութեամբ: Ցաւօք սրտի Ռիման վաղաժամ կեանքից հեռացաւ խոր ցաւ ու վիշտ պատճառելով Սիմոնին: Նա երկար ժամանակ տանջւում էր սիրած էակի կորուստով: Սիմոնը կնոջ յիշատակը վառ պահելու համար Ռիմայի գեղեցիկ նկարներով էր զարդարել բնակարանի պատերը:*

*Ռիմայի կսկծալի մահից հինգ տարի անց նա իր յաճախակի այցելութիւններով Հայաստան, աշխատանքի բերումով, սիրահարւում է հայաստանցի Լարիսայի վրայ, դեռ ամուսնութեան մէկ տարին չլրացած անողորմ հիւանդութեան պատճառով Մարտի 26-ին 2015 թիւ հեռանում է կեանքից խոր սուգի մատնելով ընտանեկան կազմին, հարազատներին, ընկերներին եւ ստուարաթիւ ճանաչողաց:*

*Նա ընկերների եւ բարեկամների մեծ շրջանակ ունէր, ամէն տարի բազմաթիւ ամանորեան բացիկներ էր ուղարկում արտասահմանեան ընկերներին : Նրա անժամանակ եւ անսպասելի մահը ինձ վրայ շատ ծանր նստեց, նա սիրելի անձնաւորութիւն էր մարդկային եւ ընկերային բարձր արժանիքներով: Սիմոնի երազն ու ցանկութիւնն էր բնակարանը ծախել եւ ապրել հայրենիքում, շատ ափսոս նա չհասաւ այդ բաղձալի ցանկութեան:*

*Սիմոնը անարդարութիւնների եւ խարդախութիւնների դէմ*

*Շար.ը էջ 18*




# ԲՆՕՐՐԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆԴԷՍ

*ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ*

2014 թ. լոյս տեսաւ «Բնօրրան»-ի հերթական համարը, որն ընդգրկում է թիւ 1-2-3-4-5-6 (21-26) 2008-2013 թուականների հրատարակութիւնները:

Նկատի ունենալով հանդէսի երկար տարիների բերած նպաստը հայ կեանքին, ամփոփ կերպով անդրադառնանք նրա ծնունդին:

Հայաստանի Հայրենակցական միութիւնների խորհուրդը (ՀՀՄԽ) հիմնադրուեց 1993 թ. Օգոստոսի 23-ին Երեւանում 9 հիմնադիր անդամներով՝ «Այնթապ» հայրենակցական միութիւն (ՀՄ), նախագահ՝ Վ. Դեմիրճեան, «Զէյթուն» Պատմամշակութային միութիւն (ՊՄՄ), նախագահ՝ Դ. Գայբակեան, Հայաստանի եղեսահայերի ՀՄ, նախագահ՝ Ժ. Աւետիսեան, «Մուսալեռ» ՀՄ, նախագահ՝ Կ. Տէր-Պետրոսեան, «Նոր Արաբկիր» հայրենակցական բարեսիրական միութիւն (ՀԲՄ), նախագահ՝ Ֆ. Ղազարեան, «Նոր Կիւրին» ՀՄ, նախագահ՝ Հ. Ծղլեան, «Սեբաստիա» ՀՄ, նախագահ՝ Ա. Բուռնազեան, «Վասպուրական» ՀՄ, նախագահ՝ Լ. Միրիջանեան, «Վերածնուած Հաճըն» ՀՄ, նախագահ՝ Գ. Կրբեկեան:

1995 թ. լոյս տեսաւ ՀՀՄԽ-ի հանդէսի առաջին թիւը (բացառիկը), որտեղ տեղ են գտել Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.-ի եւ ՀՀՄԽ-ի ատենապետ՝ Ժոզէֆ Աւետիսեանի ողջոյնի խօսքերը:

«Հայրենակցական միութիւնների շարժումը ամենաառողջ շարժումներից է: Վեր կանգնելով կուսակցական հակամարտութիւններից՝ այն ձգտում է աշխարհասփիւռ հայութեան մէջ վառ պահել Փոքր հայրենիքի յիշատակները, փրկել նրանից մնացած մասունքները եւ դրանք ներդնել Մեծ հայրենիքի բարգաւաճման գործում»-Լ. Տէր-Պետրոսեան:

«Հայրենակցական միութիւնների խորհուրդը նոր երեւոյթ է հայրենակցական միութիւնների գործունէութեան պատմութեան մէջ: Այն մեծ անելիքներ ունի նորանկախացեալ մեր հայրենիքի առկայութեամբ: Իսկ «Բնօրրան» հանդէսը ողջունելի իրողութիւն է: Ես այսպէս եմ պատկերացնում. հանդէսը ունենալու է այնպիսի առանձնայատկութիւն, ուղղուածութիւն, որը բաղդատելի չպէտք է լինի ուրիշ հանդէսների հետ»,- Գարեգին Ա. Կաթողիկոս:

«Հայրենակցական խորհուրդ. սկզբնաւորեց գործընթացը հայրենակցական համագոր-ծակցութեան շարժման համախմբելու, մէկտեղելու մեր կենսանիւթական եւ հոգեւոր կարողութիւնները վասն անկախ պետականութեան՝ հայրենակցական խոհերի եւ ազգային իղձերի երաշխաւոր իրագործող ուժի հզօրացման:

«Բնօրրանը» մեկնողը կը լինի այս երկրային գաղափարի Արարատի հորիզոնով ձգուող մեր բնօրրանի անմար յիշատակները քարոզելով եւ ամրակայելով հայրենակցական նոր սերունդների մէջ»,- Ժոզեֆ Աւետիսեան:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ես, որպէս Բէյլանի հայրենակցական միութեան ատենապետ եւ Լոս Անճելոսի Հայրենակցական միութիւնների միացեալ մարմնի (ՀՄՄՄ) փոխատենապետ, սերտ գործակցութիւն եմ ունեցել Ժոզէֆ Աւետիսեանի հետ, որը շարունակւում է, եւ բաւական տեղեակ լինելով հայրենակցականների գործունէութեանը, որոշեցի մի փոքր անդրադարձ կատարելով, ամփոփ կերպով ներկայացնել հայրենակցականների որոշակի միասնական գործունէութեան մասին:

Բացառիկում տեղ գտան «1915-1995», «Այսպէս բռնագրաւուեց Արեւմտեան Հայաստանը», «Մեր պանծալի վերապրածները», «Արդարների յիշատակն օրհնեալ է» եւ այլ վերնագրերով նիւթեր, որոնք աւետում էին հայրենակցականների շարժման սկիզբը, մի դժուարին առաքելութիւն, որի մեծ մասը իր ուսերի վրայ կրեց ու կրում է ՀՀՄԽ-ի ատենապետ՝ Ժոզէֆ Աւետիսեանը: Նա ջանք չխնայեց հանդէսը տարածելու սփիւռքի գաղթօճախներում՝ Լիբանանում, ԱՄՆ-ի Լոս Անճելոս քաղաքում եւ այլուր, ամրապնդելով Հայաստանի ու սփիւռքի հայրենակցականների կապերն ու աշխուժացնելով հայրենակցական շարժումը որպէս Անկախ Հայաստանի պետականացմանը սատարող հզօր ուժ: Չնայած, հայրենակցական միութիւնները իրենց ծրագրերով ոչ-քաղաքական կազմակերպութիւններ են, իրականում նրանք «քողարկուած» քաղաքականութիւն են վարում յանուն ազգային շահերի, օգնելով սփիւռքում քաղաքական գործիչներին եւ Հայրենիքի հզօրացման գործընթացին:

«Բնօրրան»-ը դարձաւ Հայաստանի ու սփիւռքի հայ ժողովրդին Հայաստանի անկախ պետականութեան շուրջը համախմբողը՝ ամրապնդելով Հայաստանի ու սփիւռքի հայրենակցականների կապը պետականութեան հետ, որի կարգաւորող ուժը մինչեւ 1997 թիւը նրա ղեկավար խմբագիր՝ Լեւոն Միրիջանեանն էր, այնուհետեւ՝ Ժոզէֆ Աւետիսեանը:

Ես եւս իմ համեստ լուման ունեմ «Բնօրրան»-ի տարածման գործում Լոս Անճելոսում՝ Ժոզէֆ Աւետիսեանի հետ: Նրա ներկայութիւնը Լոս Անճելոսի հայրենակցական միութիւնների միջոցառումներում աւելի էր բարձրացնում հայի հայրենասիրական զգացմունքները դէպի Հայրենիքը՝ Անկախ Հայաստանը:

Նոր կազմաւորուող ՀՀՄԽ-ն կարիք ունէր համակարգիչների, որոնց ծախսը շուրջ 10 հազար տոլլարի էր նայւում: ՀՄՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շէնեանը ազգային բարերար Վահան Շամլեանի մանկական ընկերն էր, իսկ Շամլեանը հսկայական գումարներ նուիրաբերեց եւ իր անունով հիմնադրեց «Վահան եւ Անուշ Շամլեան ազգային վարժարան»-ը: Շէնեանը առաջարկեց Վահան Շամլեանին հիւրասիրել ձկով, այդ ընթացքում նրան ծանօթացնելով Ժոզէֆ Աւետիսեանի հետ, քննարկել համակարգիչների հարցը, որը, ըստ նրան, կը յաջողուի: Ձուկ ուտելու հաւաքոյթը կազմակերպեցինք, բայց հարցը քննարկելու ժամանակ այնպիսի անցանկալի մթնոլորտ ստեղծուեց, որ «կերածներս քթներիցս եկաւ»: Շամլեանը ջղայնացաւ նշելով, որ իրեն ձուկ ուտելու հրաւիրել ենք, որպէսզի համակարգիչները գնելու դրա՞մը նուիրի...: Պահը շատ տհաճ էր ու հարցը չլուծուեց...: Համակարգիչները ուրիշ միջոցներով գնուեցին: Հարցը թողնում ենք առանց մեկնաբանութեան...:

Նշեմ նաեւ, որ հայրենակցականների ուղին փշոտ է եղել եւ պայքարելով են հասել յաջողութիւնների: Դժբախտաբար, արգելակողների մէջ լուրջ «մտաւորականներ» են եղել, որոնք խոչընդոտել են հայրենակցականների միացեալ գործունէութիւնը, խոչընդոտելով այդ գործունէութեան առաջընթացը, նոյնիսկ պատրուակ բերելով ուղղագրութեան հարցը, որ իբր թէ իրենք «չեն հասկանում հայաստանեան ուղղագրութիւնը», որի պատճառով հրաժարւում են «Բնօրրանից»: Այս խօսքերը պատկանում են ՀՄՄՄ-ի ատենապետի «աթոռին յաւիտենական կպած» ատենապետ Գրիգոր Շէնեանին, որն այս արտայայտութեամբ ՀՄՄՄ-ի մէջ մտնող բոլոր հայրենակցական միութիւնների անունից, նրանց ներկայութեամբ բոյկոտեց «Բնօրրան»-ի ստացումը նրանց կողմից: Սա վայել չէր նման կազմակերպութեան ղեկավարի կոչումին, ուստի այս եւ նման այլ վարուելակերպի հետեւանքով որոշ միութիւններ կորցնելով վստահութիւնը ՀՄՄՄ-ի ատենապետի նկատմամբ, այդ թւում մեր հայրենակցական միութիւնը, դուրս եկան ՀՄՄՄ-ի շարքերից...: Անկախ այս մօտեցումից ՀՄՄՄ-ն իր հնարաւորութեան սահմաններում ձեռք մեկնեց ՀՀՄԽ-ին:

Լոս Անճելոսի բազմաթիւ միջոցառումներից մէկն էլ Բէյլանի հայրենակցական միութեան տասնամեակի ճոխ նշումն էր Լոս Անճելոսում, որին ներկայ լինելով Ժոզէֆ Աւետիսեանը, իր ելոյթով էլ աւելի ոգեւորեց միութեան վարչութեանը եւ ժողովրդին, նրա հայապահպանման եւ Հայրենիքի կողքին լինելու գործում: 1996 թ. «Բնօրրան»-ի 1-2 (2-3) թուի էջ 38-ում եւ 2008-2013 թթ. «Բնօրրան»-ի 1-2-3-4-5-6 (21-26) թուի էջ 21-ում գրուած է այդ տասնամեակի մասին, որը հպարտանալու առիթ է միութեան համար, այսինքն «Բնօրրան»-ը սկսեց արձագանքել սփիւռքում եւ Հայրենիքում հայրենակցականների, եւ, ընդհանրապէս, հայկական իւրաքանչիւր շարժման՝ բոլոր ասպարէզներում:

ՀՀՄԽ-ի 1996 թ. Սեպտեմբերի 2-ի ընդհանուր ժողովի որոշումով իր կազմում անդամագրեց Հայաստանի մի քանի հայրենակցական միութիւններ եւ Լոս Անճելոսի Բէյլանի հայրենակցական միութիւնը, նրանց դիմումի համաձայն (տե՛ս 1996 թ. «Բնօրրան» թիւ 3-4 (4-5), էջ 64):

1998 թ. Ապրիլի 20-ին Բէյլանի հայրենակցական միութեան վարչութիւնը հանդէս եկաւ կարեւոր «Կոչ հայրենակիցներին» յայտարարութեամբ՝ բացատրական 24 կէտով, որպէսզի Բէյլանի մասին գիրք հրատարակուի Հայոց ցեղասպանութիւնից յետոյ դեռ վերապրողների յուշերը կորստից փրկելու համար: Այդ կարեւոր կոչը տեղ է գտել «Բնօրրան»-ի թիւ 1-2 (8-9) 1988 թ. էջ 26-ում:

Պատմական գիտութիւնների թեկնածու, լրագրող Գէորգ Եազըճեանը գրեց իմ «Շարունակուող մեղեդի», «Հայաստան-սփիւռք համաժողով եւ հայաստանեան օրագիր» եւ «Աքսորեալի գողգոթան» գրքերի գրախօսականները, որոնք Ժոզէֆ Աւետիսեանը ընդգրկել է «Բնօրրան»-ի թիւ 1-2-3 (14-16) 2001-2003 (տե՛ս էջ 300):

Շար.ը էջ 18




# ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ (3)
## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ

*ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ*
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

### Ենիչերիները

*Բոլորս ալ լսած ենք Ենիչերիներուն մասին: Գիտենք որ անոնք Օսմանեան կայսրութեան ժամանակ քրիստոնեաներու զաւակներէն կազմուած մասնաւոր գումարտակ մըն էր որ սարսափ կ'ազդէր թշնամիին վրայ: Աւելի յստակացնելու եւ պատմական ծիրին մէջ դնելու համար Ենիչերուներու երեւոյթը, կարժէ քանի մը պարբերութեամբ խօսիլ անոնց մասին:*

*Օսմանեան Կայսրութեան առաջին սուլթան Մուրատ Ա.-ի օրով, 1365 թուականին կազմուեցաւ Ենիչերուներու առաջին գումարտակը (1000 զինուոր): 1380-ական թուականներէն սկսեալ, Ենիչերիները «տէւշիրմէ» (հաւաքուող) զօրամասերն էին, որոնք գլխաւորաբար Անատոլույէն եւ Պալքաններէն հաւաքուած քրիստոնեաներու զաւակներն էին: Հրեաները ազատ կացուցուած էին այս ծառայութենէն: Թուրքերը չէին կրնար մաս կազմել Ենիչերիներու բանակին:*

*Ենիչերիները կը կոչուէին նաեւ «քափըգուլլարը», այսինքն «դռան սպասաւորները», Սուլթանական պալատներու «դռնապանները»: Անոնք ենթակայ էին շատ խիստ կարգապահութեան, համազգեստաւոր էին, ամսական եւ հանգստան թոշակ ալ կը ստանային:*

*Ամէն հինգ տարին մէկ, կայսրութեան քրիստոնեայ նահանգներու կառավարիչները «մարդորսորդութեան» կ'ելլէին եւ իրենց շրջաններէն 6-14 տարեկան տղաքը կը հաւաքէին, զանոնք կը յանձնէին մասնաւոր ընտրուած Թուրք ընտանիքներու որպէսզի Թրքերէն լեզուն եւ իսլամական կրօնքը լաւ սորուէին, թլփատուէին, իսլամանային, ներմուծուէին Թրքական մշակոյթին մէջ, Թրքանային եւ պատրաստուէին իրենց առաքելութեան: Թրքական ընտանիքներէն «շրջանաւարտ» ըլլալէն ետք, անոնք կը փոխարդուէին մասնաւոր դպրոցներ ուր զինուորական լաւագոյն մարզումներու եւ արուեստին հետ կը սորուէին նաեւ հաշուապահութիւն, դիւանագիտութիւն, երկրաչափութիւն , եւ որեւէ գիտութիւն որուն մէջ պատանին սէր, հետաքրքրութիւն եւ կարողութիւն ցոյց կու տար: Ասոնք կը կոչուէին «աճէմի օղլան» (անփորձ տղայ): Այս դպրոցները կը նմանէին մեր վանքերուն ուր կարգապահութիւնը եւ ամբողջական հնազանդութիւնը պայման էր: Անոնց արգիլուած էր մօրուք երկարելը (կրնային պեխ ունենալ), շատ խիստ կարգապահութեամբ միշտ հսկողութեան տակ էին:*

*Մեր պատմութեան գիրքերուն մէջ կը կարդանք որ ինչպիսի սրտաճմլիկ տեսարաններ կը պարզուէին երբ Թուրքերը գային եւ հայերու կամ քրիստոնեաներու տուներէն պատանիները տանէին: Շատ մը ոչ-Թուրք պատմաբաններ սակայն տարբեր պատկեր ցոյց կու տան: Շատ մը քրիստոնեայ ընտանիքներ մասնաւոր կը պատրաստէին իրենց զաւակները որպէսզի «հաւաքարար»ները զանոնք ընտրէին: Շատ մը Թուրք դրացիներ կը խնդրէին իրենց քրիստոնեայ դրացիներէն որ «հաւաքարար»ներու այցելութեան ժամանակ իրենց (Թուրքերուն) զաւակները «որդեգրուէին» քրիստոնեաներուն կողմէ որպէսզի անոնք ալ պատեհութիւնը կամ բախտը ունենային զտուելու եւ տարուելու: Ինչու՞, որովհետեւ եթէ զաւակդ ընտրուեցաւ, ան առիթը պիտի ունենար շատ լաւ սնունդ առնելու եւ շատ բարձր ուսում ստանալու, պետական եւ զինուորական բարձրաստիճան պաշտօններու տիրանալու, եւ կրնար մինջեւ անգամ Մեծ Վեզիրի պաշտօնին տիրանալ եթէ այդքան մը խելացի, ճարպիկ եւ բախտաւոր ըլլար: Նուազագոյն պարագային ան օր մը, քանի մը տարիէն, կրնար տուն այցելել եւ մեծապէս օգտակար ըլլալ իր ծնողքին եւ ընտանիքին: Այս կը նմանի զաւակդ գիշերօթիկ լաւագոյն վարժարանը ղրկես, վստահ որ ան օր մը շատ փայլուն ապագայ պիտի ունենայ, պետական շատ բարձր պաշտօններու պիտի տիրանայ:*

*Ենիչերիները սկզբնական շրջաններուն սուլթաններուն թիկնապահներն էին: Պատերազմներու ժամանակ սուլթանները իրենք անձնապէս կը հրամայէին օսմանեան բանակներուն: Ենիչերիներուն պարտականութիւններէն մէկն էր նաեւ պաշտպանել իրենց սուլթանը: Անոնք նաեւ կ'արշաւէին ճակատամարտերու ամենավտանգաւոր վայրերը եւ դժուարութիւնները կը վերածէին յաղթանակներու: Անոնք սարսափն էին թշնամիներուն: Կը բաւէր որ Ենիչերիները երեւնային, արդէն թշնամի զինուորներուն սրտերուն մէջ վախը կ'իյնար:*

*Ենիչերիները Օսմանեան բանակին միայն տասը (10) առ հարիւրն էին: Օսմանցիներուն հեծելազօրքը գլխաւոր կորիզն էր բանակին: Մինջ 1400-ական թուականներուն Ենիչերիներու թիւը 1000-ի շուրջ կը տարուբերուէր, կամացկամաց, 1680-ական թուականներուն անոնց թիւը հասաւ 54,200-ի:*

*Ենիչերիները պէտք չէր ամուսնանային եւ ընտանիք կազմէին: Բայց երբ շատ զօրացան, սկսան չփանալ եւ զանազան պահանջքներ դնել Սուլթանին առջեւ: 1566-ին Սուլթան Սէլին Բ. ը արտօնութիւն տուաւ անոնց ամուսնանալու: Անոնք սկսան իրենց կամքը պարտադրել, կառավարական բարձր պաշտօններ գնել եւ փոխանակ միայն զինուորական եւ պետական հարցերով զբաղուելու, սկսան զանազան շահութաբեր գործերու մէջ մտնել: Թուրքիսլամ բնակչութիւնը սկսաւ նախանձիլ, խլրտիլ եւ պահանջել որ իրենց զաւակներն ալ ներմուծուին Ենիչերիներու զօրագունդերուն մէջ: 16-րդ դարուն,Ենիչերիներու զաւակները մասնաւորաբար, առանց զտումի, առանց նախնական - նախապատրաստական մարզումներու եւ զինուորական կրթութեան, սկսան արձանագրուիլ: Կարգապահութիւնը շատ նուազեցաւ, Սուլթանին եւ կառավարութեան հանդէպ հնազանդութիւնը տկարացաւ եւ բնականաբար իրենց ալ մարտունակութիւնը շատ տուժեց: Քանի մը անգամ անոնք ապստամբեցան Սուլթաններուն դէմ եւ աւելի բարձր վճարում պահանջեցին: 1622-ին երբ Օսմանցիները պարտուեցան Լեհերէն, Սուլթան Օսման Բ. ը ուզեց Ենիչերիներու գումարտակները «կարգի բերել», բարեւաւել կամ բնաջնջել: Ենիչերիները երբ իմացան Սուլթանին մտայնութեանը, ապստամբեցան, գերեվարեցին Օսման Բ.-ը եւ ... գլխատեցին զայն: Կարգ մը Վիլայէթներու մէջ, Ենիչերիները իրենք էին «Վալի»ները, (կառավարիչները) եւ կառավարութիւնը, եւ ան որ չհնազանդէր իրենց, եաթաղանին հպումը կ'ըզգար իր վիզին վրայ...*

*1800-ական թուականներու սկիզբները, Սուլթան Սիլիմ Գ. փորձեց Օսմանեան բանակը արդիականացնել: Բնականաբար ան բախեցաւ իր զօրավարներուն, Իսլամ Մոլլաներուն եւ մանաւանդ Ենիչերիներուն բուռն ընդդիմութեան եւ իր կեանքը վրայ տուաւ: 1826-ին Սուլթան Մուրատ Բ. յաջողեցաւ բնաջնջել ենիչերիները: Իստամպուլի մէջ անոնց բանակատեղին ռմբակոծեց (ուր 4000 ենիչերիներ սպաննուեցան), ողջ մնացողներուն աքսորեց կամ գլխատեց: Վերջին Ենիչերիները գլախտուեցան Թեսալոնիքիի «Արիւնոտ Աշտարակ»ին մէջ:*

### Մուհամմէտ Ալի

*Մինչ Սուլթան Սելիմ Գ.-ը կը փորձէր Օսմանեան Կայսրութիւնը բարեւաւել, Եւրոպականացնել, Եգիպտոսի մէջ Մուհամմէտ Ալին ալ իր կարգին կը փորձէր Եգիպտոսը արդիականացնել:*

*1805-ին Մուհամմէտ Ալին Եգիպտոսի կառավարիչ (Վալի) նշանակուեցաւ Սուլթան Սելիմ Գ.-ի կողմէ: Շուտով Մուհամմէտ Ալին իր դիրքը զօրացուց Եգիպտոսի եւ իր շրջակայքին մէջ:*

*Մեմլուքները տակաւին այս ժամանակ կարեւոր ներկայութիւն մըն էին Եգիպտոսի մէջ եւ շուրջ 600 տարի Եգիպտոսի վրայ իշխելէ ետք, ամէն կողմ տարածուած էին եւ վտանգ կը ներկայացնէին Մուհամմէտ Ալիի հեղինակութեան: Մուհամմէտ Ալին որոշեց ոչնչացնել Մեմլուքները: Իր զաւակը, Թուսունը, Արապական թերակղզի պիտի մեկնէր զինուորական արշաւանքներու: Այս առիթով ան Գահիրէի մէջ մեծ ընդունելութիւն մը սարքեց եւ հոն հրաւիրեց Մեմլուք մեծամեծները: Երբ Մեմլուք մեծամեծները «հուրի»ներու հետ ուրախ կեր ու խումի մէջ էին, բաւական մը զինովցած, եգիպտացի զինուորները շրջապատեցին պալատը եւ ահաւոր ջարդ մը տուին Մեմլուքներուն: Կ'ըսուի թէ մինչ զինուորները կը ջարդէին Մեմլուքները, Մուհամմէտ Ալին իր սենեակին մէջ վախէն ահաւոր կը դողար ...Եթէ չյաջողէր, իր եւ իր ընտանիքին գլուխը վրայ պիտի տար: Երբ Մեմլուք ղեկավարութիւնը բնաջնջուեցաւ, Մուհամմէտ Ալին գրաւեց անոնց ստացուածքները եւ բնաջնջեց Մեմլուքներու բանակները:*

*Մուհամմէտ Ալին բազմաթիւ անգամներ օգնած էր Սուլթանին, Կայսրութեան զանազան գաւառներուն մէջ ապստամբութիւններ զսպելով կամ նոր հողամասեր գրաւելով:*

*Մուհամմէտ Ալիի ամենամօտ եւ ամենավստահելի խորհրդականներէն մին էր նաեւ Պօղոս Պէյ Եուսուֆեանը: Ան այնքան մը յաջող եւ մեծ վաճառական մըն էր որ Մուհամմէտ Ալին զինք հրաւիրեց իր քարտուղարը եւ գործակիցը, թարգմանիչը, գլխաւոր խորհրդատուն, գլխաւոր ներկայացուցիչը, առեւտուրի եւ արտաքին գործոց նախարարը ըլլալու: Տասնամեակներով Պօղոս Պէյ Եուսուֆեանը Եգիպտոսի ամենակարեւոր քաղաքագէտն - դիւանագէտն էր: Այս ժամանակ, բազմաթիւ հայեր եգիպտական կառավարութեան մէջ բարձր պաշտօններ կը վարէին: Գիտէի՞ք որ Սուէզի Ջրանցքին գլխաւոր կապալառուները, շինարարները (ոչ բերնակիրները...) հայերն էին:*

*Մուհամմէտ Ալին բարեկարգիչ Վալի, կառավարիչ մըն էր: Շատ երկար է անոր բարենորոգումներու շարքը: Միայն ըսեմ որ ան արդիականացուց Եգիպտոսը, բանակը վերազինեց Եւրոպական զէնքերով եւ մարզեց անոնց մեթոտով, Եւրոպական զէնքերը ներմուծեց, զօրաւոր նաւատորմ մը ստեղծեց, զինամթերք արտադրող գործարաններ բացաւ, երկրագործութիւնն ու ճարտարարուեստը եւ ճարտարապետութիւնը քաջալերեց եւ զարգացուց, արեւտրական կապեր հաստատեց բազմաթիւ երկիրներու հետ, եւայլն: Ան հարիւրաւոր կարող երիտասարդներ Եւրոպա ղրկեց (որոնց մէջ կային մեծ թիւով հայեր), մասնաւորաբար Ֆրանսա, որպէսզի ուսանէին, վերադառնային Եգիպտոս եւ «Եւրոպականացնէին» Եգիպտոսը:*

*Մուհամմէտ Ալիի փառասիրութիւնը սակայն չէր բաւականանար Եգիպտոսով, Սուտանով եւ Արաբական Թերակղզիով: Ան կ'ուզէր տիրանալ Օսմանեան Կայսրութեան գահին: «Ես շատ լաւ գիտեմ որ Օսմանեան Կայսրութիւնը ամէն օր դէպի կործանում կ'երթայ: Կայսրութեան աւերակներուն վրայ ես պիտի հիմնեմ իմ լայնածավալ թագաւորութիւնս որ պիտի համնի մինչեւ Եփրատ եւ Տիգրիս» ըսած է ան:*

*Շատ հաւանաբար Պօղոս Պէյի խորհուրդներով, Մուհամմէտ Ալի Փաշան, երբ հիմնէր իր թագաւորութիւնը Օսմանեան Կայսրութեան աւերակներուն վրայ, ըստ փրոֆ. Ջէյն Ջէյնի (Օսմանեան Կայսրութեան լաւագոյն մասնագէտներէն մին) ան մտադրած էր իր թագաւորութիւնը կառավարել Աւստրիոյ-Հունգարական Կայսրութեան Դաշնակցային (federation) օրինակին հետեւելով: Ան իր թագաւորութիւնը պիտի բաժնէր գլխաւոր չորս մասերու: Ա.- Եւրոպական Շրջան (քրիստոնեայ Եւրոպան), Բ.- Թրքական Շրջան (Արեւմտեան Անատոլուն, Ալպանիան ներառեալ), Գ,- Արեւելեան Անատոլուն (Հայկական շրջան), եւ Դ.- Արաբական Շրջան (Հիւսային Ափրիկէ եւ Արաբական երկիրները): Ընդհանուր գիծերու մէջ, կառավարական կարգ մը կարեւոր նախարարութիւններ վերապահուած պիտի ըլլային Կեդրոնական Դաշնակցային Կառավարութեան, ինչպէս բանակը, արտաքին քաղաքականութիւնը, պիւտճէն, եւ այլն, իսկ շրջանները պիտի ունենային իրենց ներքին լայն ինքնավարութիւնը: Շրջանները բնականաբար իրենց տուրքերը պիտի վճարէին եւ զինուոր պիտի հայթայթէին Դաշնակցային Կառավարութեան:*

*Վստահաբար Պօղոս Պէյի եւ այլ բարձրաստիճան հայ նախարարներու եւ պաշտօնեաներու խորհուրդո՛վ, Հայկական Բարձրավանդակը եւ Կիլիկիան զատ Շրջանի մը վերածուած էր: Ջմոռնանք որ տակաւին ջարդերը չէին սկսած, հայ ժողովուրդի մասսան, քանի մը միլիոն, տակաւին կ'ապրէր պատմական, պապենական հողերուն վրայ: Պատկերացուցէք պահ մը որ եթէ այս ծրագիրը իրականանար, ի՞նչ կրնար ըլլալ հայութեան վիճակը այսօր... Հաւանաբար 40-50 միլիոն հայ բնակչութիւն, շատ հարուստ երկրի մը վրայ ( հողը եւ ընթերքը), պատմական Հայաստանն ու Կիլիկիան, երկու ծովեզերքներով (Սեւ եւ Միջերկրական Ծովերը...) գիտական մեր ուղեղներով, զինուորական մեր գիւտերով, մեր կարողութիւններով... Շատ հաւանաբար Ամերիկան, Եւրոպան եւ Ռուսիան մեր կարծիքը պիտի առնէին կարեւոր որոշում մը չ'առած եւ եթէ «ոչ» ըսէինք, ՈՉ պիտի ըլլար այդ...*

*Ինչու՞ չիրականացաւ այս մեծ ծրագիրը...*

*Շար.ը էջ 19*

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ ՀԷՆՐԻ ՄՈՐԳԸՆԹԱՈՒ ՅՈՒՇԵՐԸ

## ԱԶԳԻ ՄԸ ՍՊԱՆՈՒՄԸ

***ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ***

*1895-ի եւ յետագայ ջարդերի տարիներին հայերին արգիլուած էր բանակ զինուորագրուիլը, նրանց թոյլատրուած չէր զէնք կրել: 1908 թուականին, ''Երիտ Թուրքեր"-ի իշխանութիւն գալուց յետոյ, Թուրքիայում փոխուել էր կացութիւնը: 1915 թուականին, Թուրքիայի ամէն քաղաքում հազարաւոր հայեր կային, որոնք զինուած էին հրազէններով ու պատերազմական այլ գործիքներով: Վանի ինքնապաշտպանութեան կռւում հայերը զէնք էին ճօճել թուրքին, ոչ միայն հերոսական դիմադրութիւն ցոյց տուել դուշմանին, այլեւ յաղթանակի դրօշ պարզել ոստանի ամրոցի բարձունքին: Թուրքը գիտակցել էր, որ հայկական ջարդերը հաւանական պայքարի բնոյթ կարող էին ստանալ: Հայ ցեղի ծրագրուած բնաջնջումը կարողանալ իրականացնելու համար, թուրքին անհրաժեշտ էր անկարողութեան մատնել հայ կռուող ուժին, հաւաքել հայկական շէների ու քաղաքների բնակչութեան զէնքերը եւ պաշտպանական այլ միջոցները:*

*1915 ... թրքական բանակի հայ զինուորները նոր կանոնակարգի էին ենթարկուել, նրանք թէեւ կանոնաւոր բանակի կռուող զինուորներ էին, սակայն նրանցից վերցուել էին զէնքերը, վերածուել ճամբաներ շինողների ու նոյնիսկ գրաստ քաշողների: Ուղեկցող թուրք զինուորի խարազանի տակ, զինուորական ծանր պիտոյքներն էին իրենց ուսերով կրել, մինչեւ իրենց մարմինների կէսը ձիւնին մէջ թաղուելով՝ լեռներում ճամբայ բացել իրենց երթի համար: Որպէս սնունդ թափթփուքներ էին տուել նրանց, վերցրել նրանցից ինչ որ ունէին՝ նոյնիսկ հագուստները: Գիշերներին չոր, թաց գետնին էին պարկում, հսկիչները նրանց խարազանում էին, որ անկարող լինէին քնել: Մինչեւ սահմանեալ տեղը հասնէին մեռնում էին հայկական շէների հողի մշակները, քաղաքների հասուն տղաները, որոնք ''ինչեր ասես չէին անի", եթէ իրենց կանանց, քոյրերի, փոքրերի համար կռուի տանէին նրանց տանուտէրերը, եկեղեցու սպասաւորները, այդ ինչ արեցիք հայ մեծեր, պատերազմի էր ելել թուրքը, դուք էլ՝ թաքստոցներում պահած հին թէ նոր զէնքերով նրա՛ դէմ պատերազմի դուրս գայիք: Թուրքը կարո՞ղ էր երկու ճակատով կռիւ տալ: 50-100 հոգիներով զինուորների խումբեր էին հաւաքում, նրանց չորս-չորս իրար կապելով, տանում էին հեռու մի տեղ... գնդակահարում: Մահացածների մարմինները թաղելու եկած մարդիկ նրանց մերկ էին գտնում, թուրքերը իրենց սովորութեան համաձայն կողոպտում էին սպաննուածների հագուստները: Մորգընթաուն գրում էր նաեւ, որ իրենց զոհերին սպաննելուց առաջ՝ նրանց գերեզմաններն էին իրենց փորել տալիս: Բանակ հաւաքագրուածներից ոմանք յաջողել էին փախուստ տալ զօրանոցներից, միանալ կռուող հայերի խումբերին: Նաեւ Մուսա Լեռան շէներից զինուորագրուածներ փախել էին զօրանոցներից, ելել լեռան կռուի:*

*Մորգընթաու յիշատակում է՝ Ամերիկեան հիւպատոսների տեղեկագիրներից մի դրուագ, որ Ցուլիսի սկզբները, բանուորի աշխատանքի իջեցուած 2000 հայ զինուորներ, Խարբերդից ուղեւորուել էին ճամբաների շինութեան: Քաղաքի կուսակալը յայտարարել էր, որ նրանց չարիք պիտի չպատճառուէր, դիմել գերման միսիոնարին հանդարտեցնելու նրանց: Միսիոնարը հաւատացել էր կուսակալին, հանդարտութեան կոչ էր ուղղել ժողովուրդին: Բնաջինջ էին արել նրանց՝ մարմինները հասարակաց փոսի մէջ նետել: Սակաւ մարդիկ էին յաջողել փախչել, շրջանում տարածել ջարդերի լուրը: Մի քանի օրեր յետոյ նոյն կերպ Տիարպէքիր էին ղրկուել 2000 բանուորի աստիճանի իջեցուած զինուորներ, նրանց ընդդիմութիւնը կամ փախուստը անկարելի դարձնելու համար՝ լերկ դաշտեր էին քշել նրանց, որոնք անօթի մնալով մեռնում էին: Տարագիրներից առաջ ճամբայ ելած կառավարական գործակալներ, քիւրտերին տեղեկացնում էին կարաւանին մօտենալը, պատուիրում էին կատարել իրենց ''պարտականութիւնը": Ոչ միայն աւազակաբարոյ քիւրտ տղամարդիկ էին լեռներից իջնում անցնող կարաւանների վրայ, այլ նաեւ մսագործի դանակներով զինուած նրանց կանայք, վայելելու համար իրենց ''յաչս Ալլահին Քրիստոնեայ մը սպաննած ըլլալու արժանիքը":*

*Ըստ Մորգընթաուի, այդ ջարդերը առանձին դէպքեր չէին, ինք կարող էր ուրիշներ էլ յիշատակել այնքան գարհուրելի, որքան իր պատմածները: Եւ որ Օսմանեան կայսրութիւնում կանոնակարգուած դրութիւն էր ի գործ դրուած՝ ոչնչացնել բոլոր հայ քաջառողջ այրերը, որոնք կարող լինէին մի նոր սերունդի ծնունդ տալ, որից յետոյ ազգաբնակչութեան տկար մասը դիւրին պիտի լինէր բնաջնջել:*

*Ինչքան որ ահաւոր եղած լինէին զինուորագրուածների ջարդերը, նրանք ողորմութիւն էին բաղդատելով այն վարմունքին, որոնք պիտի ենթարկուէին զէնք պահած կասկածուող հայերը: Գիւղական վայրերում, քաղաքներում փակցուած որմազդերը ծանուցում էին՝ քրիստոնեաները իրենց զէնքերը սպայակոյտի կեդրոններ բերէին: Տագնապել էին հայերը, այդ հրամանը միայն իրենց համար էր եղել: Հայը հնազանդեց, թուրքը հրճուագին տիրացաւ նրանց յանձնած կարաբիններին, որոնց համար ապացոյց համարուեց, որ նրանք «յեղափոխութիւն» էին ծրագրած եղել:*

*Զէնք յանձնողներին կամ կասկածեալներին ամբաստանում էին դաւաճանութեան մէջ: Հազարաւորներ զէնք չէին յանձնել, որովհետեւ զէնք չէին ունեցել: Ուրիշ շատեր զէնք չէին յանձնել ոչ թէ ապստամբելու համար, այլ իրենց կեանքը ու կանանց պատիւը պաշտպանելու համար, ինչպէս Մուսա Լեռան պատուելի Տիգրան Անդրէասեանը գրել էր աշխարհին ուղղուած իր պատգամի մէջ, որ կռուի էին ելել՝ նաեւ իրենց կանանց պատուի համար: Մորգընթաու պիտի գրէր՝ «Այն չարչարանքները, որոնց ենթարկուեցան այդ ըմբոստները, կը կազմեն ժամանակակից պատմութեան ամենէն զզուելի արարներէն մէկը»: Մարդիկ կարծել էին, որ մարմնական չարչարանքը արդէն դադրած էր եղել որպէս վարչական ու դատական պատիժ լինելու: Ամենէն բարբարոսներն էլ չէին կարող ներկայցնել աւելի գարհուրելի տեսարաններ, քան տեղի էին ունենում ամբողջ Թուրքիայում: Թուրք ոստիկանները պահուած զէնքեր փնտռելու պատրուակով կողոպտում էին եկեղեցիները, պղծում խորաններ ու սրբազան իրերը: Ուշակորոյս աստիճանի ծեծում էին քահանաները, նրանց մեղադրում էին խռովութիւններ քաջալերելուն: Զէնք ունենալու մեղադրանքով զինում էին եկեղեցականները, նրանց տանում պատերազմական խորհուրդի առջեւ, նրանց տանում էին փողոցներով, թուրք ամբոխը գրգռելու համար:*

*Ոստիկանները վատ էին վարուել նաեւ կիներու հանդէպ, զէնք թաքցնելու ամբաստանութեամբ հանում նրանց հագուստները՝ խարազանում ծառերի թարմ ճիւղերով, նոյնիսկ մայրանալու պատրաստ կանանց: Բռնապղծութիւնները խուզարկութիւնների հետ այնքան բազմաթիւ էին, որ ոստիկանների մօտենալուն՝ կանայք ու աղջիկներ փախչում լեռներ, անտառներ:*

*Ձերբակալւում ու բանտարկւում էին գիւղերի ու քաղաքների կայտառ մարդիկ: Բանտերի դահիճներ գեհենային արարքներով նրանց ստիպում յայտարարելու, որ իրենք ''յեղափոխականներ" էին եւ իրենց զէնքերուն պահած տեղերը յայտնում էին: Նրանց չարչարանքները սկսւում էին գանակոծութեամբ, դահիճը բարակ գաւազանով հարուածում էր զոհի գարշապարներին: Մորգընթաուն գրում, որ այդ ցաւը սկզբում սաստիկ չէր, սակայն երբ այն շարունակուէր ցաւը սարսափելի էր լինում՝ մկանները ուռում ու ճեղքւում էին: Ոստիկանները, նրանց նման չարչարանքների էին ենթարկում մինչեւ նուաղէին, երեսներին ջուր թափելով զարթեցնում ու շարունակում նոյնը: Եթէ խօսել չյաչողցնէին, փրցնում էին նրանց յօնքերը, մօրուքը, եղունգները, կարմրած երկաթ էին դնում լանջերին, միսերը քաշում կարմիր-կրակ աքցաններով, եռացած կարագ լեցնում վէրքերին: Երբեմն էլ ոստիկանները նրանց ոտքերը ու ձեռքերը գամում էին փայտէ տախտակների վրայ, նմանացնելով Յիսուսի խաչելութեանը: Հազարաւոր նման դէպքերում մերժել էին զէնք յանձնել... որովհետեւ չունէին: Ոստիկանների իրենց բնակավայրեր մօտենալուն, նրանց զէնք յանձնելու համար դրացի թուրքերից գնում, խուսափելու համար նման չարչարանքներից: Մորգընթաու-ն շարունակում է գրել, որ հրաժարւում է ներկայացնել նման բազմաթիւ ուրիշ դէպքեր եւս՝ այն գարհուրելի է:*

*Մորգընթաուն Պէտրի պէյի հետ խօսել էր իրենց այդ գործելակերպի մասին: Թուրքը հաճոյքով էր նկարագրել նման չարչարանքները: Նա խոստովանել էր, որ այն թելադրողը կառավարութիւնն էր եւ որ նման գործելակերպ իրականացնելու մասին խօսուել էր «Միութիւն ու Յառաջդիմութիւն» կոմիտէի հաւաքոյթներում: Զարչարանքի ամէն նոր գործելակերպ ողջունւում էր, ճիգ էին թափում նման մարմնական չարչարանքներ որդեգրելու: Թուրք պէյը չէր հաղորդել անունը այն պաշտօնեայ մարդու, որ պարգեւ էր շահել առաւել սարսափելի չարչարանքի գործելակերպի համար: Վանայ գաւառի կուսակալ Ճեւտէթ-ը նշանաւոր էր դահիճների «ամենահամբաւորը» լինելու, նրան տրուել էր «Պաշգալէի ոճրագործը» ծաղրամակդիրը, որովհետեւ անգթութեան այդ «մասնագէտը» չարչարանքի «գլուխ-գործոց» կերպ էր հնարել՝ «ձիու պայտեր գամել իր զոհերուն ոտքերուն»:*

*Մորգընթաու-ն շարունակում է, որ թուրքերի այդ գործելակերպը չէր բովանդակել այն բոլոր խժդժութիւնները, որ ժամանակի լրագրերը անուանում էին՝ «Հայկական խժդժութիւններ», անոնք հայկական ցեղի բնաջնջման նախապատրաստական գործողութիւններն էին: Գահընկեց արուած Սուլթան Ապտիւլ Համիտի հրամանն էր եղել՝ «սպաննել, սպաննել», իսկ օսմանեան ժողովրդապետութիւնը նոր ծրագիր էր որդեգրել՝ փոխանակ հայ ազգը տեղում լիովին ջարդելու... այն տարագրել: Կայսրութեան հարաւային եւ հարաւարեւելեան մարզում գտնւում էին սուրիական անապատը ու Միջագետքի հովիտը: Այդ տարածութեան առանձին մասերում, հազար-հազար տարիներ առաջ աշխարհի ծաղկեալ հին քաղաքակրթութիւնների, Արմինների՝ Արատտա-Արմանի-Արմինա-Միտաննի պետական միաւորների եւ Սումեր-Շումեր, Բաբելոն, Ասորեստան, Պարսկաստան, Մարաստան (ներկայ Ազրպէյջանի տարածք) պետութիւնների որոշ տարածքների մաս էին կազմել: Թուրքերի տիրապետութեան վեց դարերից յետոյ, անմշակ, տխուր, լքեալ, առանց քաղաքի ու աւանի, առանց սիրուել լինելու մարզ էր ներկայացնում, բնակուած մի քանի վայրենի ու մոլեռանդ Պէտէւի ցեղախումբերից եւ միայն տարիների անխոնջ աշխատանքը կարող էր մարդու համար այն բնակելի վայրի փոխակերպել:*

*Իշխող կառավարութեան գլխաւորները յայտարարում էին, որ կայսրութիւնում բնակող երկու միլիոն ու աւելի հայերին ամայի եւ հիւրամերժ այդ երկրամասը ղրկել: Այդ կարգադրութիւնը, ըստ Մորգընթաուի իբր՝ ''բարեմտութեամբ որոշուած", արդէն ներկայացնում էր անգթութեան եւ անարդարութեան գերազանցութիւնը: Ըստ նրան, հայերը մեծ մասով երկրագործներ չէին, նրանք առեւտրական ու ճարտարարուեստական բնագաւառների մարդիկ էին: Թէեւ հայերից շատեր ագարակապանութեամբ էին զբաղւում եւ շատեր էլ քաղաքներում ու աւաններում բնակուելով, կազմում էին երկրին տնտեսական ներուժը: Հայ ժողովուրդը հազարներով հաւաքել ու ղրկել ամենէն ամուլ մի մարզ, ամենէն աւելի անմարդկային արարքներից մէկը պիտի լինէր: Սակայն թուրքերը չէին մտադրուել հայերին այնտեղ հաստատելու: Նրանք վստահ էին, որ նրանց ամենամեծ մասը իրենց սահմանուած տեղը պիտի չհասնէին: Ըստ նրան, տարագրութեան նպատակն էր գողութիւնը եւ քանդումը, որը բնաջնջումի նոր գործելակերպ էր: Օսմանեան իշխանութիւնների տարագրութեան հրամանը, ամբողջ մի ցեղի մահուան վճիռն էր, նրանք շատ լաւ էին գիտակցում այդ, իրեն հետ նրանց խօսակցութիւնների ընթացքին՝ երբեք չէին ջանում թաքցնել այդ:*

*1915 թուականի գարնան ու ամռան, տարհանումի ընթացքը շարունակւում էր, միայն մեծ քաղաքներ՝ Պոլիսը, Իզմիրը եւ Հալէպը զերծ էին մնացել, միւս բոլոր վայրերը, նոյնիսկ միայն մէկ ընտանիք բնակուող վայրերում, թատերաբեմ հանդիսացան այդ «աննի-*

*Շար.ը էջ 19*

# Հռոմի Ֆրանչիսկոս Պապի Պատմական Ելոյթէն Ետք

*Շարունակուած էջ 1-էն*

*նէր» կրկնելու վտանգաւոր հետեւանքներէն: Էրտողան վերստին կոչ ուղղեց պատմաբաններու խորհուրդ կազմելու:*

*Կիրակի օրուայ իրադարձութիւններու մասին հայաստանաբնակ լրագրող Սարօ Արեան Վատիկանէն մեզի կը փոխանցէ հետեւեալ մանրամասնութիւնները.*

*12 Ապրիլ 2015-ը Ոսկի տառերով գրուեցաւ մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին Հռոմի Ֆրանչիսկոս Պապին կողմէ մատուցուած պատարագին մասին դեռ երկար պիտի խօսուի: Քրիստոնէութեան հաւատքին վէմը դարձած Պետրոս առաքեալի մասունքներուն վրայ հիմնադրուած տաճարին մէջ տեղի ունեցած պատարագը ի մի խմբեց ամբողջ Հայ ժողովուրդը իր տարբեր թեւերով եւ երանգներով: Կարեւոր էր նաեւ Պապին արտասանած պատգամը ու անոր խօսքը ուժանակի պայթումի մը պէս լսելի կը դառնար աշխարհի չորս կողմը: Եւրոպական առաջատար թերթերը իրենց կայքերուն մէջ կարեւոր տեղ կու տային լուրին, իսկ Ֆրանսական AFP-ն հաւանական կը նկատէր, որ Վատիկան-Թուրքիա դիւանագիտական յարաբերութիւնները լարուին: Այստեղ պէտք է յիշեցնել, որ առաջին անգամը չէր, որ Հռոմի քահանայապետ մը կը խօսէր Հայոց ցեղասպանութեան խնդրին մասին: Պէտք է նաեւ կարեւորել հայ եկեղեցւոյ երանաւէտ հայրերէն՝ Սուրբ Գրիգոր Նարեկացիի Տիեզերական Եկեղեցւոյ Դոկտոր կոչումին արժանանալը:*

*Այս բոլորը զուգադիպութեան մը արդիւնքը չէն: Անցնող տարիներուն Միջին Արեւելքի մէջ արձանագրուող զարգացումները եւ Սուրիոյ ու Իրաքի տարբեր շրջաններուն մէջ քրիստոնեայ փոքրամասնութիւններուն կրած տառապանքները դարձած են Վատիկանի մտահոգութեանց գլխաւոր կիզակէտը:*

*Այս ընդհանուր պարունակին մէջ պէտք է դիտարկել Պապական աթոռին գործողութիւնները:*

*Ֆրանչիսկոս Պապի Հայոց Ցեղասպանութեան մասին ըրած յայտարարութենէն անմիջապէս ետք Թուրքիա հակադարձեց: Թուրքիոյ ԱԳՆ-ն իր մօտ կը կանչէր Անգարայի մօտ Վատիկանի դեսպանը: Աւելի ուշ Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը բաւական խիստ յայտարարութիւն մը կատարելով նաեւ տուն կանչեց Վատիկանի մօտ իր դեսպանը: Թրքական լրատուական միջոցներ նաեւ կը խօսին, որ երկրի քաղաքական վերնախաւին մօտ բաւական տհաճ մթնոլորտ մը կը տիրէ, եւ կ'ըսուի որ Պապին կատարած յայտարարութիւնը անսպասելի էր:*

*Զմռնամ ըսելու, որ Հռոմի Պապը 2014-ին այցելութիւն տուած էր Անգարա եւ բաւական ջերմ ընդունելութեան արժանացած Թուրքիոյ իշխանութիւններուն եւ նախագահ Էրտողանին կողմէ:*

*Վատիկանեան պատարագի աւարտին Հռոմի Պապէն զատ նոյնպէս ուղերձներ յղեցին Հայ եկեղեցւոյ զոյգ կաթողիկոսները, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ կաթողիկոս պատրիարքը: Գարեգին Բ.՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը իր խօսքով շնորհակալութիւն յայտնելէ բացի նշեց, որ քրիստոնէութիւնը հայ ժողովուրդին համար հանդերձանք չէ, այլ դարձած է անոր էութեան կարեւոր մասնիկը: Գարեգին Բ. վեհափառ հայրապետը նաեւ յոյս յայտնեց, որ Վատիկան Ցեղասպանութեան նիւթին հետ կապ ունեցող բոլոր արխիւները կը բանայ հանրութեան առջեւ: Իր կարգին Արամ Ա. վեհափառ հայրապետը կարեւորեց Հռոմի Պէնէտիքթոս 15-րդ Պապին Օսմանեան իշխանութիւններուն յղած խստաոճ բողոքի նամակը Ա. Աշխարհամարտի օրերուն, որուն միջոցաւ Հռոմի Պապը արագօրէն կը պահանջէր վերջ տալ սպանդներուն: Արամ Ա. Վեհափառ նաեւ ըսաւ, որ անարդարութիւնը Աստուծոյ դէմ ուղղուած քայլ է եւ հաստատեց, որ Ցեղասպանութեան փաստը անկարելի է թաքցնել:*

*Վատիկանի խօսքը աշխարհի 1.3 միլիառ կաթողիկէ քրիստոնեաներուն համար յաճախ շատ աւելի կարեւոր է քան իրենց սեփական ղեկավարներուն որեւէ պատգամը: Ու Պապին կատարած յայտարարութիւնը պէտք է նաեւ անպայմանօրէն այս պրիսմակով դիտել: Յառաջիկայ օրերը շատ կարեւոր են, այն իմաստով, որ Եւրոպայի տարբեր երկիրներու հանրային կարծիքը կրնայ բարձրաձայն քննարկել Հայոց Ցեղասպանութեան օրակարգը: Պէտք է հաւատալ նաեւ, որ Վատիկանի յղած պատգամը շատ աւելի ազդու, անկեղծ եւ անմիջական է քան որեւէ այլ ամպիոնէ արձակուած կոչ կամ ճանաչում: Հռոմի Պապը լալէն եւ սուգէն հրաժարելու կոչ ըրաւ: Ան խօսեցաւ մարդկութեան վէրքերուն մասին եւ այդ վէրքերուն մէջ տեղադրեց հայ ժողովուրդին վէրքը:*

*Թուրքիոյ մէջ կատարուող զարգացումները կը խօսին Պապի խօսքին ուժականութեան մասին: Պաշտօնական Անգարա այս հանգրուանին չի պատրաստուիր իր լեզուն կամ ռազմավարութիւնը փոխել, բայց եւ այնպէս այս անսպասելի «դիւանագիտական ապտակը» կրնայ Թուրքիոյ ղեկավարութեան համար նոր մտորումներու առիթ հանդիսանալ: Վատիկան յանուն ճշմարտութեան արձագանգեց եւ անոր կատարած քայլը միայն Հայութեան եւ Հայաստանի շահերուն համար չէ, այլ յանուն ճշմարիտին, յանուն արդարին եւ յանուն մարդկութեան վէրքերուն բուժման:*

*Վատիկան շարժեցաւ խիզախօրէն առանց մտածելու դէպքին հետեւանքներուն մասին: Այս պահուն դիւանգիտական պայթումը գտաւ իր արձագանգները եւ դեսպան քաշել կամ չքաշելու խնդիրը այդքան ալ կարեւոր չէ:*

*Կը մնայ սպասել յառաջիկայ օրերու զարգացումները, գիտնալով նաեւ, որ Վատիկանի քաջ հովիւը քաղաքական առեւտուրի օրէնքներով շարժող մէկը չէ: Ան ճշմարտութեան ձայնն է: Մարդկութեան ամէնէն վեհ ձայներէն մէկը: Անոր խօսքին արձագանգը աւելի խորքային չերտերը հասնելու ներուժ ունի:*

www.massispost.com

## ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏԻ ԵՒ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ACO ԱԿՈՒՄԲԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՆՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՇԱԽՄԱՏԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ



*2015 թուականի Մարտի 7-8 Քալիֆորնիայի շախմատի նահանգային երկօրեայ առաջնութիւնում, որը տեղի ունեցաւ Սանտա Կլարիտա (Վալենսիա) քաղաքում ACO ակումբի պատանիները նուաճեցին 2 թիմային եւ 4 անհատական գաւաթներ:*

*FIDE միջազգային կարգի մարզիչ Արթուր Աղաջանեանի սաները բարձր մրցակցութեան պայմաններում կարողացան գրաւել շատ պատուաւոր 2 թիմային երկրորդ տեղեր մինչեւ 650 (K-6 U 650) եւ մինչեւ 1000 (K-8 U1000) վարկանիշ ունեցող միջին դպրոցականների թիմային պայքարում: Անհատական գաւաթների արժանացան Սահակ Կոկիկեանն ու Վարդան Պետրոսեանը, մինչեւ 400 (K-3 U400) վարկանիշ ունեցող տարրական դպրոցի աշակերտների մրցաշարում, ինչպէս նաեւ Ալեքս եւ Յակոբ Թաքւորեան եղբայրները մինչեւ 650 վարկանիշ ունեցող միջին դպրոցականների մրցաշարում: Անհատական մրցապայքարում ուշադրութեան էր արժանի յատկապէս 9-ամեայ մարզիկ Ալեքս Թագւորեանի յաջողութիւնը, ով մասնակցում էր իր տարիքից բարձր միջին դպրոցականների մրցաշարում, 10 հնարաւորից վաստակելով 9 միաւոր նա առաջին եւ երկրորդ տեղերը կիսեց Ջորջ Ժանգի հետ:*

*Նոյն մրցաշարի թիմային պայքարում Ալեքս եւ Յակոբ Թագւորեան եղբայրները, Ռաֆայէլ Յովսէփեանը, Աշոտ Թաթինցեանը, Գրիգոր Չեբիշեանը եւ Վաչէ Ղազարեանը արժանիօրէն դարձան Քալիֆորնիայի երկրորդ լաւագոյն թիմը:*

*ACO թիմի չորս այլ շախմատիստներ Արթուր Աեքսանեանը, Ալեքս Գեւեջեանը, Անդրանիկ եւ Ջաւէն Գեօզալեանները, որոնք DIXIE CANYON Տարրական դպրոցի սաներ են, պայքարեցին աւելի բարձր կարգի K8 միջին դպրոցականների մրցաշարում նոյնպէս գրաւելով երկրորդ տեղ:*

*Ուշագրաւ էին նաեւ չորսամեայ Ռաֆայէլ Բեքեանի վաստակած երկու միաւորները K1 մրցաշարում,*

*Շախմատի դպրոցը կատարում է ընդունելութիւն: Դպրոցում ամառային արձակուրդների օրերին գործում է նաեւ շախմատային ճամբար:*

*Մանրամասն տեղեկութիւնների համար զանգահարել (818) 793-6302*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Email:** --------------------------

## ՀԲԸՄ-Ի ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*եւ գանատահայ ծանօթ մտաւորական եւ գրող Ռաֆֆի Պետրոսեան: Անոնք առանձնապէս անդրադարձան բռնի իսլամացած հայերու ինքնութեան, ընկերային իրավիճակի եւ անոնց հանդէպ որդեգրուելիք կեցուածքի մասին: Արդեօք անոնք ինչպիսի վերաբերմունքի պէտք է արժանանան Հայաստանի եւ հայ գաղութներու կողմէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պիտի ընդունի՞ այդպիսիները՝ ինչ են պայմանները, այս հարցի մասին եղան կարծիքներու աշխոյժ փոխանակումներ: Դրական նկատուեցաւ այն հանգամանքը, որ մեծ թիւով իսլամացած հայեր ներկայիս սկսած են բացայայտել իրենց ինքնութիւնը: Շատեր սկսած են յայտարարել «Թէեւ Թուրք եմ, բայց՝ հայ եմ»:*

*Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը առիթ մը պիտի ըլլայ նորանոր յայտնաբերումներու հայ ինքնութեան, պահանջատիրութեան եւ մեր ժողովուրդի արդար դատի հետապնդման գծով:*

*Այս առթիւ բարձրօրէն կը գնահատենք Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետներու Համախմբումի Վարչութիւնը իր այս եզակի եւ բարձր մակարդակով պատրաստուած եռօրեայ ցուցահանդէսին ու յարակից հրապարակային միջոցառումներուն համար:*

## «ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏՈՒՆԸ»

*Շարունակուած էջ 6-էն*

*նադրամի, ինչպէս նաեւ ՀԱՀԱԵՄ-ի Հայ Ժառանգութեան Յանձնախումբի անդամ, նկարագրեց փոխյարաբերութիւնը երկու կողմերու: Հրանդ Կիւզէլեան Ուխտ մը ըրած էր Աստուծոյ հետ: Հաւատքը ամենակարեւոր երեւոյթն է այսպիսի ուխտի մը: Կիւզէլեան հակադարձեց Հայ պատանիներու «Թուրքացման» գործին: Ան պայքարեցաւ Հայ պատանիներու իրենց մշակոյթէն բռնի հեռացման դէմ: Ան գնաց եւ փնտռեց կորսուածը եւ յուսահատը՝ զուգահեռ Աւետարանի պատմութեան, -ըսաւ Վեր. Իքմէքճեան:*

*Ջաւէն Խանճեան, ամփոփելով Կիւզէլեանի ազդեցութիւնը կարդաց հատուած մը անոր օրագրութենէն:*

*«Պետութիւնը անարդար եղած է, չար, ճնշող, անսիրտ եւ կողմնակալ: Նախանձելով՝ փոխանակ հետեւելու առաջինի նախանձի, ուսուցանելու եւ հասնելու բարձր մակարդակի, Թուրքը կ'ուզէ ոչնչացնել մեզ, իւրացնել, վիրաւորել եւ զրկել մեզ մեր ամենատարրական իրաւունքներէն, լեզուի, հաւատքի, մշակոյթի: Ես մտածեցի թէ ի՞նչ կրնամ ընել, ո՞ր չափով կրնամ ընել իմ բաժինը եւ օգտակար դառնալ իմ ազգի մնացորդներուն»:*

*«Եւ Կիւզելեան ըրաւ անսպասելին եւ վիթխարին՝ Պոլսոյ Կետիկ Փաշայի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ներքնամասին թէ Թուզլայի ամառնային Քէմբ ԱՐՄԷՆի մէջ Թրքացումէ փրկելով բիւրաւոր կորուստի մատնուած Հայ պարման-պարմանուհիներէ, շարունակեց Խանճեան: «Կիւզելեանի թողուցած ազդեցութիւնը հսկայական էր, ոչ միայն մի քանի հազար հայորդիներուն վրայ, որոնք անցան Պոլսոյ Պատանեկան Տան դռներէն ներս, այլ նաեւ Թուրք ընկերութեան եւ քաղաքականութեան վրայ, որուն արձագանգը պիտի շարունակուի մինչեւ անորոշ ժամանակներ,- ըսաւ Խանճեան: Ան նշեց թէ Կիւզէլեան ընդունած էր Հրանդ Տինքը Պոլսոյ Պատանեկան Տան մէջ երբ ան եօթը տարեկան էր: 1961-1981 տարիներուն, Հրանդ Տինք, Կիւզէլեանի հովանաւորութեան տակ, եւ ապա հինգ տարիներ եւս, Կիւզելեանի ձերբակալութենէն, չարչարուելէ, դատուելէ եւ աքսորուելէ ետք, վառ պահեց եկեղեցիին ջահն ու առաքելութիւնը: Տինք եղաւ Ակօս թերթի գլխաւոր խմբագիրը, պաշտպանեց մարդու եւ փոքրամասնութիւններու իրաւունքները Թուրքիոյ մէջ եւ քննադատեց Թուրքիոյ ժխտողականութիւնը Հայոց Ցեղասպանութեան: Անոր սպանութիւնը 2007-ին, Պոլսոյ մէջ գայրացուց բազմաթիւ Թուրք քաղաքացիներ, պատճառ դարձաւ լայնածաւալ բողոքներու եւ աշխարհի ուշադրութիւնը դարձուց փոքրամասնութիւններու հանդէպ Թուրքիոյ հալածանքին:*

*Խանճեան ըսաւ՝ թէ Գիրքը պատմուած Կիւզէլեանի պարզ լեզուով եւ Քրիստոնէական համեստ հոգիով, գրական կոթող մը չէ, ոչ ալ բարձր ոճով գրուած գիրք մը: Այս սահմանափակումները հաւասարակշռուած են անոր հզօր յիշողութիւններով: Անոր պայքարը անհանդուրժող պաշտօնատարներու դէմ, կը ներշնչէ ընթերցողը յաճախակի վերագրութիւններով Աւետարանին, որպէս հիմնական ուղեցոյցը իր գործունէութեան, եւ ցոյց կու տայ մեծ պատկերացում մը, թէ ինչպէս կարելի է խուզարկու աչքերէ հեռու մնալ, թշնամական քաղաքական միջավայրի մը մէջ:*

*ԱՀԱԸ-ը երկար տարիներ նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնած է Պոլսոյ Պատանեկան Տան, եւ Կիւզէլեան իր գիրքին մէջ կը գնահատէ զայն, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան առաջնորդները, որոնք հաւատարմօրէն եւ առատաձեռնութեամբ նեցուկ կանգնած են այս Տան, ինչպէս նաեւ իր հիմնած Թուզլայի ամառնային ճամբարին:*

*Այս գիրքին Անգլերէն լեզուով հրատարակութեամբ, Հայոց Ցեղասպանութեան Միացեալ Յանձնախումբը կը նշէ կեանքը եւ գործը Հայ Աւետարանական խոնարհ հերոսի մը, որ յաջողած էր ի դէմ աշխարհին լոյս հանել պատմութիւնը իր պայքարին՝ հանդէպ Թուրքիոյ ցեղասպանութեան ոճիրին:*

## ՀՐԱՇԱԼԻ ՀԱՅ ՄԱՐԴԸ ԱՆՄՈՌԱՑ ՍԻՄՈՆԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*ըմբոստացող եւ պայքարող էր, խեղճին պաշտպանող, կարիքաւորին օգնող: Նա ցանկալի հիւր էր, իր յեղափոխական հուժկու եւ ոգեւորիչ ձայնով ու զուարճախօսութիւններով բերկրանք եւ ուրախութիւն էր պարգեւում տնեցիներին չկշտանալով նրա ներկայութիւնից:*

*Նա գորովագութ եւ անկեղծ հոգեբանութեամբ, բարոյապէս մաքուր կենցաղով ամէնի կողմից սիրուած էր, նա խուսափում էր կեղծաւոր եւ անարժան մարդկանց բարձրանալու ելարանը դառնալ, մեր օրերում այդպիսիները շատ են, միամիտ մարդկանց շահագործում են ղեկավարի դիրքի հասնելու համար: Սիմոնի հաճելի զբաղմունքներից էր որսորդութիւնը, մի անգամ ձմռան եղանակին. դաշտ ու ձոր, լեռ ու բլուր ձիւնածածկ միացայ նրա որսորդական արշաւին:*

*Սիմոնը բացառիկ եւ օրինակելի անձնաւորութիւն էր, նրա վաղաժամ եւ անժամանակ մահը երկար ու երկար զգալի պիտի դարձնի բաժանումը:*

*Շատ պիտի ներես իմ սիրելի Սիմոն, որ ներկայ չեմ եղել քո յուղարկաւորութեանը, դու Թեհրան, ես Ամերիկա, ցիր ու ցան, միշտ կարօտով ու սիրով իրար նկատմամբ, ինչ արած, «անարժան» հայեր ենք, հանգստաւէտ կեանքի խաբկանքով հայրենիքը թողած ապրում ենք օտար երկնակամարների ողորմածութեան ներքոյ ուծացման ենթակայ, երբ խելքի պիտի գանք, երբ պիտի ճշմարիտ հայրենասէրներ լինենք, հայրենիքով շնչող, հայրենիքի համար քրտինք թափող առողջ կեանք ապրենք:*

*Սիրելի ընկեր, թող այս երկտողը մի փունջ ծաղիկ լինի քո անթառամ յիշատակին:*

*Լաւ իմացիր, քանի սաղ եմ, դու ապրելու ես իմ յուշերում որպէս իմ սիրելի եղբայր ընկերը անմոռանալի:*

## ԲՆՕՐՐԱՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*Այսպիսով, «Բնօրրան»-ը դարձաւ ամբողջ հայ ժողովրդի կապի միջոցը, եւ նրա բոլոր կարեւոր իրադարձութիւնների պահպանման ապահով արխիւը: Այն պարունակում է բազմապիսի տեղեկութիւններ մեր բնօրրանների, սփիւռքի եւ Հայրենիքի մասին:*

*«Բնօրրան»-ի հրատարակութիւնը շարունակւում է մեծ զոհողութիւններով, բազմաթիւ մեկենասների միջոցով...:*

*Եթէ չլինէր «Բնօրրան»-ը, մեր բնօրրաններին վերաբերող բազմաթիւ արժէքաւոր տեղեկութիւններ մատնուած կը լինէին կորուստի, ինչպէս բազմաթիւ ականատեսների վկայութիւնները...: Այս իմաստով «Բնօրրան»-ը կարելի է համարել պրպտումների գանձարան:*

*«Բնօրրան»-ը հրատարակուեց նաեւ երեք առանձին հատորներով, որոնք ընդգրկում են մի քանի տարուայ հրատարակութիւնները՝ թիւ 1-2-3 ( 14-16) 2001-2003, թիւ 1-2-3-4 ( 17-20) 2004-2007 եւ թիւ 1-2-3-4-5-6 ( 21-26) 2008-2013:*

*«Բնօրրան»-ը շարունակում է իր գոյատեւման պայքարը, որը կարելի է դիւրացնել դրա համար ստեղծելով հիմնադրամ: Այս հարցը քննարկեցինք Ժոզէֆ Աւետիսեանի հետ իմ Երեւանում գտնուելու ժամանակ 2015 թ. փետրուարի 22-ից Մարտի 23-ը: Այո՛: Հիմնադրամը կ'ապահովի «Բնօրրան»-ի գոյատեւումը, ապահովելով նաեւ ղեկավար խմբագրի արդիւնաւէտ աշխատանքը՝ չմտածելով նրա ծախսերի մասին:*

*«Բնօրրան»-ը իր հարուստ բովանդակութեամբ եւ անանցողիկ յուշերով մեր բնօրրանների մասին, անգնահատելի նուէր է հայ ժողովրդին՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առթիւ:*

*Կարծում եմ հայ մշակութասէր ի վիճակի անհատները կարող են օգնել ՀՀՄԽ-ի ատենապետին կամ «Բնօրրան»-ի ղեկավար խմբագիր Ժոզէֆ Աւետիսեանին հիմնադրամը ստեղծելու գործում: Յոյսով ենք այն կ'իրականանայ...:*

## ՀԱՅԵՐԸ ՊԷՏՔ Է «ԱՄՕԹԻ ՊԱՏ» ԿԱՌՈՒՑԵՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*Իսրայէլը՝ Կազայի մէջ ժամանակակից ողջակիզում կատարելուն համար:*

*Իսրայէլի, Միացեալ Նահանգներու եւ միջազգային հանրութեան լռութիւնը Թրքական անարգալից վարքագիծին դէմ, ստեղծած է վերահսկողութենէ դուրս գտնուող հրէշ մը: Բոլոր անոնք, որոնք չփացուցած են էրտողանը, պարտաւոր են զսպել զայն՝ նախքան անոր իսկական չարիք դառնալը տարածաշրջանին եւ աշխարհին համար:*

*Թարգմանեց՝*
*ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ*

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ

Շարունակուած էջ 15-էն

Մուհամմէտ Ալին եւ իր զաւակը, Իպրահիմ Փաշան, շատ անգամներ օգնած էին Սուլթանին: Յունաստանի, Արաբական Թերակղզիի, Սուտանի, Եթովպիոյ ապստամբութիւնները զսպած եւ մինչեւ Ուկանտա հասած էին: 1821-ի Յունաստանի ապստամբութիւնը Իպրահիմ Փաշան արեան մէջ խեղդեց: Սակայն, Անգլիան, Ֆրանսան եւ Ռուսիան միջամտեցին եւ Հոկտեմբեր 20, 1827-ին, Նավարինոյի ծովային ճակատամարտին Եգիպտական նաւատորմը փճացուցին: Մուհամմէտ Ալին, որպէս փոխյատուցում, Սուլթանէն պահանջեց Սուրիան: Օսմանցիները նախ համաձայնեցան բայց վերջը չյարգեցին իրենց խոստումը: Ալին Սուրիան պահանջած էր, քանի որ Սուրիան շատ հարուստ երկիր մըն էր, երկրագործական եւ ճարտարապետական արտադրութիւններով, առեւտրական լայն կապերով: Նաեւ, Սուրիան ռազմագիտական մեծ կարեւորութիւն ունէր – Սուրիան կը գտնուէր Օսմանեան Կայսրութեան Սուլթանին եւ Եգիպտոսի միջեւ որպէս «արգելակ երկիր» (buffer state) ինչպէս նաեւ երկար եւ հարուստ ծովեզերքով:

Մուհամմէտ Ալին, իր զաւկին Իպրահիմ Փաշային հետ բանակը վերակազմակերպելէ եւ նաւատորմը վերաշինելէ ետք, 31 Օգոստոս 1831-ին յարձակեցաւ Սուրիոյ վրայ եւ գրաւեց զայն:

27 Մայիս 1832-ին Ագրան գրաւելէն ետք, Իպրահիմ Փաշան Գոնեայի ճակատամարտին (21 Դեկտեմբեր 1832) ջախջախիչ պարտութեան մատնեց Օսմանեան բանակները: Ենիչէրիները բնաջնջուած էին (1826-ին), Օսմանեան բանակը՝ պարտուած: Ոչ մէկ արգելք կար Իպրահիմ Փաշային եւ Կ. Պոլսոյ միջեւ: Կը մնար որ Եգիպտացիք քալելով Պոլիս մտնէին եւ Սուլթանը վար առնէին: Սակայն...Եւրոպացիք նորէն միջամտեցին եւ Քութահիայի Համաձայնութեամբ Կրէտէն ուզեցին տալ Եգիպտոսին եւ Իպրահիմ Փաշային ալ կարգել Սուրիոյ Վալին - կառավարիչը: Բայց Մուհամմէտ Ալիին անկախ Թագաւոր չհռչակեցին: Բնականաբար Մուհամմէտ Ալին գոհ չմնաց: Սուլթանը, որպիսզի կարենայ «զսպել» Մոհամմէտ Ալի Փաշան, իրեն առաջարկեց Եգիպտոսի, Սուտանի եւ Արաբիոյ ժառանգական իշխանութիւնը եթէ ան քաշուէր Սուրիայէն, վերադարձնէր Կրէտէն եւ ետ քաշէր իր Օսմանեան Կայսրութենէն անկախանալու ծրագիրը: Մուհամմէտ Ալին ոչ միայն մերժեց այս առաջարկը, այլ իմաց տուաւ Եւրոպական պետութիւններուն իր անկախութիւն հռչակելու մտադրութեան մասին: Մինչ այդ, Օսմանեան վերակազմակերպուած բանակի հրամանատար Հաֆէզ Փաշան վստահեցուց Սուլթան Մահմուտ Բ.-ին որ ինք կրնայ Եգիպտական բանակը պարտութեան մատնել: Մինչ Օսմանեան բանակը կը մօտենար Սուրիոյ սահմաններուն, Յունիս 24, 1839-ին, Ուրֆայի մօտ Նէզիպէի ճակատամարտին Իպրահիմ Փաշան ծանր պարտութեան մատնեց Օսմանցիները: Օսմանեան նաւատորմը անցաւ Եգիպտացիներուն կողմը: Եգիպտական բանակին եւ Կ. Պոլսոյ միջեւ Օսմանեան բանակ եւ նաւատորմ չկար: Իպրահիմ Փաշան կը պատրաստուէր գրաւել Կ. Պոլիսը եւ իր հայրը հռչակել Սուլթան: Եւրոպան...Եւրոպան դա՛րձեալ միջամտեց: Անոնք, Լոնտոնի վեհաժողովով Իպրահիմ Փաշային առաջարկեցին իր հօրը ժառանգական իշխանութիւն տալ Եգիպտոսի, Սուտանի եւ Օսմանեան Կայսրութեան կարգ մը հողամասերուն վրայ եթէ Եգիպտական ուժերը պարպէին Սուրիան եւ Լիբանանի ծովեզերքը: Մուհամմէտ Ալին տատամսեցաւ: Յոյս ունէր որ Ֆրանսան կ՛օգնէ իրեն: Անգլիական եւ Աւստրիական նաւատորմերը մօտեցան Սուրիոյ եւ Ալէքսանտրիայի: Անոնք գրաւեցին Ագրան, գոցեցին Նեղոսի մուտքը, ռմբակոծեցին Ալէքսանտրիան, Սայտան եւ Պէյրութը եւ սպառնացին բնաջնջել Իպրահիմ Փաշայի բանակը: Մուհամմէտ Ալին ստիպուած տեղի տուաւ: Ան Կրետէն, Սուրիան եւ Հիճազը յանձնեց, իր բանակին քանակը նուազեցուց 18,000 զինուորներու, Օսմանցիներուն նաւատորմը վերադարձուց եւ փոխարէնը ստացաւ Եգիպտոսի եւ Սուտանի վրայ ժառանգական իշխանութիւնը:

Եթէ Եւրոպացիք, գլխաւորաբար Անգլիան չմիջամտէին, Իպրահիմ Փաշան շատ դիւրաւ պիտի գրաւէր Կ. Պոլիսը, Մուհամմէտ Ալին պիտի թագադրուէր որպէս նոր Սուլթանը (Պօղոս Պէյը շատ հաւանաբար վարչապետ նշանակուէր) եւ Հայաստանը ազատուէր Օսմանեան լուծէն: Եթէ...

Ախ այս «Եթէ»ները:

Համաշխարհային Առաջին Պատերազմէն ետք, Սուլթանին զահընկեցութեամբ եւ Լօզանի Դաշնագրով վերջ գտաւ Օսմանեան Կայսրութիւնը, 1923 թուականին, Մուստաֆա Քէմալ Աթաթիւրք Թուրքիոյ Հանրապետութեան Առաջին Նախագահը եղաւ:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Շարունակուած էջ 16-էն

կարագրելի ողբերգութիւններուն»: Միայն շատ քիչ չէներ «տիրոջը» չէին հնազանդել, չէին յանձնել զէնքեր, կռուի ելել դուշմանի դէմ, ոչ թէ կարաւան եղած ճանապարհներին, անապատների աւազուտներում մահ գտնելու, կռուի էին ելել մահ պատճառելու դուշմանին, կամ քաջին վայել կռւում դիմակայել մահը: Արմին-Հայեր, հիմա պարծանքով են յիշատակում՝ Սասունի, Վանի, Մուսա Լեռան, Վասպուրական Շատախի, Շապին Գարահիսարի, Զէյթունի, Հաճընի, Այնթապի, Եդեսիայի եւ այլ մի քանի չէների քաջերի կռիւը: Հայոց Մեծ բանաստեղծ Եղիշէ Զարենց գրել է՝ «Աշխարհն առողջ, լիարիւն ազգերի հետ է հաշուի նստում եւ ոչ՝ հանճարեղ ու տանուլ տուած դժբախտների»:

Մի շարք գիւղերում որմազդեր էին փակցուել, հրաւիրել գիւղի ամբողջ մարդկանց, մէկ կամ երկու օր յետոյ, նշուած ժամին, ներկայանալ ծանուցուող վայրեր: Որոշ դէպքերում մունետիկը փողոցներն էր պտըտում բերանացի կատարելու հրահանգները: Որտեղ որ ազդարարութիւն չէր եղած, ոստիկաններ մտնում տներ, հրամայում տան բնակիչներին հետեւել իրենց, տղաներին դպրոցներից վերցնում, որոնց գրքերը օրուայ դասի վրայ բաց էին մնում, հորովէլներով հողը ակօսող մշակներ, լծկան եզների մաճերը թողած, շտապ վերադառնում տուն: Նրանք նախ ընկնում էին կանանց վրայ, «ինչպէս Վեսուվ հրաբուխը յանկարծակի բերաւ Բոմբէյը», ցորեանի հացն էին թողնում փուռերում, չէին խնայել նոր մայրացած կանանց, նրանց բռնադատում վեր կենալ անկողիններից, մանչերը գրկերնին հետեւել էին կարաւանին, պիտի գրէր Մորգընթաուն: Դողում է ձեռքս, դողում է հոգիս, դողում է մարմինս, դողում է գրիչս, ես որպէս լեռնական Արմին-Հայ, ինչպէս թղթին յանձնեմ այն ամենը, ինչ որ նկարագրել էր Մորգընթաուն: Դու, արարչական Արմին-Հայ, ընդվզումով, հոգու տուայտանքով շատ ես ընթերցել քու ցեղի մարդկանց եղեռնագործութեան մասին, դու ինքդ երեւակայիր թէ ինչպիսի ցաւ կարող էր իր նմանին պատճառել՝ գազանային բնազդից «Նոր մարդու» քաղաքակիրթ վիճակին դեռ չհասած տմարդի թուրքը: Ներող եղիր, սակայն «կորցնել յիշողութիւնը, մոռանալ անցեալը, ինքնութիւնդ մոռանալն է» պիտի գրէր տաղանդաւոր արձակագիր՝ Կարէն Խաչատրեան-Խաչկարը: Մորգընթաու, Հրեայ ազգի զաւակ, ճշմարտութեան լոյսի կանթեղը վեր պահած, առանց որեւէ շահադիտական նպատակի, աշխարհին պատմեց մի ցեղի կործաման ողբերգութիւնը: Մարդկային ազնուագոյն առաքինութիւններով ՄԱՐԴ, ինչպիսի հոգեկան տուայտանքով հաղորդում մարդու տառապանքը, հարազատի նման նկարագրում օտար մարդկանց ցաւը, խորունկ ցաւի զգացումով՝ ցաւում մարդու կողմից մարդուն պատճառուած ցաւը: Մարդու հանդէպ պատճառուած ցաւի դէպքերի նկարագրութիւնը երբեմն դադարեցնում է գրել, ասելով, որ այլեւս անկարող է այն շարունակել: Աշխարհին կանչում, այնտեղ՝ արեւի լոյսով ողողուն «Եդեմի, առաջին մարդու՝ Եվայի ու Ադամի» երկրում Եղեռն է, իր յուշերը եղեռերգ է, Արմին-Հայ ցեղի արարման լոյսի ու նրա ոչնչացման պատմութեան ամենաահռելի գեհենը: Այդ ցեղի դուշման թուրքին նկարագրում որպէս աւազակաբարոյ, անբարոյ մարդիկ, որոնք հրճւում էին մարդ տանջելու հաճոյքից, մարդիկ՝ որոնց հոգիներում Աստուած գութ, ցաւ զգալու առաքինութիւն չէր հոսել:




### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Սփիւռքահայ ծանօթ գրող, մտաւորական, կրթական մշակ եւ հասարակական գործիչ Պէպօ Սիմոնեանի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Շուշան Վարդանեան Մոլոյեան իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարեսգաճման ֆոնտին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԼՈՐԱՆՍ ՊԱՊԱՀԷՔԵԱՆի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանիքին եւ համայն պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարեսգաճման ֆոնտին:



In Collaboration with
UCLA Herb Alpert School of Music

ԼԱՐՓ

LARK MUSICAL SOCIETY
Presents

IAN KROUSE

# ARMENIAN requiem




## ԻԱՆ ԿՐԱՈՒՍ
## ՌԵՔՎԻԵՄ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

Renewing our faith in God as we commemorate the victims of
The Armenian Genocide

HONORARY BOARD

HE Archbishop Hovnan Derderian
HE Archbishop Mushegh Mardirossian
HE Bishop Michael Mouradian
Rev. & Mrs. Ron and Renee Tovmassian
Mr. & Mrs. Ken and Meredith Khachigian
Mr. & Mrs. Joe and Joyce Stein
Drs. Nazareth and Ani Darakjian
Mr. & Mrs. Carl and Joan Terzian
Mr. & Mrs. Jerry and Pat Turpanjian

SOLOISTS

Shoushik Barsoumian, *Soprano*
Nike St. Claire, *Mezzo-Soprano*
Yeghishe Manucharian, *Tenor*
Vladimir Chernov, *Baritone*

Conducted by
**NEAL STULBERG**

## Wednesday, April 22, 2015
8:00 P.M.
**Royce Hall, UCLA**
340 Royce Drive, Los Angeles, CA 90095

Pre-Concert lecture by
**DR. KARENN CHUTJIAN PRESTI**
7:00 P.M. (same location)

1915-2015
Centennial of the Armenian Genocide